Azg Ազգ

2 ՆՈՅԵՄԲԵՐ 2010 ԵՐԵՔՇԱԲԹԻ 200 (4580)

ISSN: 1829-1651

2009. Արտաահման - Հայաստան 82 - 18

ԿԱՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Երկրի մրցունակության գնահատման հիմնական չափանիշներն են ՀՆԱ ծավալները եւ կառուցվածքը, մեկ շնչին բաժին հասնող ազգային եկամտի չափը, տնտեսության աճի տեմպերը, արդյունաբերական արտադրանքի ծավալները ՀՆԱ կառուցվածքում եւ արտահանման ծավալները: Կան նաեւ այլ ցուցանիշներ, որոնք բնութագրում են տվյալ պետության տնտեսության վիճակը, բայց վերը նշվածներն այն կարեւորագույն մակրոպարամետրերն են, որոնք մշտապես պետք է գտնվեն պետության ուշադրության ներքո:

Մեր տիպի երկրների համար շատ կարեւոր են տեղական արտադրության զարգացումը, ներմուծման փոխարինումը եւ արտահանման առաջանցիկ աճի տեմպի ապահովումը ՀՆԱ աճի նկատմամբ: Ասիական դինամիկ զարգացող երկրների փորձը հենց դա է հուշում: Ցավոք, այս առումով շատ տխուր պատկեր է տիրում մեզ մոտ:

Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների, այս տարվա 9 ամիսների ընթացքում ունեցել ենք ՀՆԱ 2,8 տոկոս աճ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: Թվում էր, թե վերջապես դուրս ենք գալիս ճգնաժամից եւ շարժվում ենք առաջ, սակայն նկատենք, որ Հայաստանում ճգնաժամը նոր չի սկսվել եւ հիմա չի ավարտվելու: Ճգնաժամը կամ դրա հաղթահարումը միայն ՀՆԱ աճը կամ անկումը չեն: Քանի դեռ Հայաստանը չի դարձել արտադրող եւ արտահանող երկիր՝ խոսել ճգնաժամի հաղթահարման կամ դրա չհաղթահարման մասին՝ համարում եմ կոնյունկտուրային ու պարզունակ բանավեճ:

Տես էջ 3

«Արարատ սարը Լենինի նվերն է Աթաթուրքին»

Այդ մասին Թերեզա Լեւոնյան Քոլ ստորագրությամբ «Հայաստանում զբոսաշրջության զարգացման հեռանկարը» վերնագրով հրապարակված հոդվածում գրել է անգլիական հեղինակավոր «Ֆայնենշլ թայմս» թերթը, որին, վկայակոչելով թուրքական ANKA գործակալությանը, հոկտեմբերի 30-ին արձագանքել է «Ջումհուրիեթը»:

Ըստ թուրքական թերթի, «Ֆայնենշլ թայմսը» ահա թե ինչպես է ներկայացրել Հայաստանին. «Թուրքիայի եւ Ադրբեջանի, Վրաստանի ու Իրանի միջեւ լեռների արանքում խցկված նախկին խորհրդային այս փոքրիկ հանրապետությունը ժամանակին ձգվում էր Փոքր Ասիայից մինչեւ Կասպից ծով: 301-ին պետականորեն առաջինն ընդունեց քրիստոնեությունը, իսկ 100 տարի հետո, շնորհիվ Սուրբ Մեսրոպ Մաշտոցի, ունեցավ 36 «մտրսնչող» տառերից կազմված դժվարամատչելի այբուբենը, որը Նոր Կտակարանը թարգմանելու մղումով Վենետիկում սովորել է լորդ Բայրոնը: Պարսիկների, արաբների, թուրքերի արշավանքներից եւ պարբերաբար կրկնվող ջարդերից հետո իրականացված 1915-ի ցեղասպանությունը Երեւանում տեղակայված հուշարձանն է խորհրդանշում: Իսկ ազգային ինքնությունն առ այսօր պաշտպանում են դավանանքի եւ լեզվի հենասյուները: Ներկա պահին Թուրքիայի սահմանի երկայնքով փռված Արարատ լեռը, որը Հայաստանի փառավոր խորհրդանիշն է, 1921-ին Լենինը նվիրել է Աթաթուրքին»:

Հ. Ղ.

Թուրքիայի արտգործնախարարությունը ողջունում է ասրախանյան հանդիպումը

Երեկ Թուրքիայի արտգործնախարարությունը, հանդես գալով հաղորդագրությամբ, ողջունել է Հայաստանի-Ռուսաստանի-Ադրբեջանի նախագահների ասրախանյան եռակողմ հանդիպումը եւ գոհունակություն է հայտնել «Վստահության ամրապնդման վերաբերյալ հատուկ արձանագրության» մասին կողմերի համատեղ հայտարարության առնչությամբ:

Հաղորդագրության մեջ, ինչպես վկայում է կիսապաշտոնական «Անադոլու» գործակալությունը, մասնավորապես նշվում է, որ գոհունակությամբ է ընդունվել հոկտեմբերի 27-ին Ասրախանում ՌԴ նախագահ Մեդվեդեւի նախաձեռնությամբ կազմակերպված եռակողմ գագաթժողովների նոր օղակը հանդիսացող հանդիպումը, որին մասնակցել են Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահներ Սերժ Սարգսյանն ու Իլհամ Ալիեւը:

Թուրքիայի արտգործնախարարությունը միաժամանակ Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծմանն ուղղված ջանքերի աշխուժացմանը նպաստելու առումով հուսադրող է համարել գագաթժողովը եւ ցանկություն է հայտնել, որ կողմերի միջեւ մարդասիրական ոլորտին առնչվող պայմանավորվածությունը հետագայում կտարածվի նաեւ այլ ոլորտների վրա:

Հ. Ղ.

Սարկոզին գնում է Բաքու՝ ֆնարկելու Փասիեի գործունեությունը

Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին այցելելու է Ադրբեջան: Ադրբեջանական լրատվամիջոցների տեղեկացմամբ, սա կլինի Սարկոզիի առաջին այցելությունը Ադրբեջան:

Այս այցն, անշուշտ, ինքնին նշանակալի է, թեկուզ այն հիմքով, որ Ֆրանսիան ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացում միջնորդական առաքելություն իրականացնող ԵԱՀԿ Մինսկի խմբի երեք համանախագահող երկրներից մեկն է:

Ֆրանսիայի նախագահի առաջիկա այցի մասին հայտարարել է Ֆրանսիայում Ադրբեջանի դեսպան Էլչին Ամիրբեկովը: Նրա խոսքերով, այցի նախապատրաստական աշխատանքները դեռ շարունակվում են: «Ներկա դրությամբ, հստակեցվում են Սարկոզիի այցելության ժամկետները», հայտարարել է ադրբեջանցի դեսպանը: Նրա ներկայացմամբ, երկկողմ բանակցություններում նախատեսված է ֆնարկել ղարաբաղյան հակամարտության հարցում Ֆրանսիայի դերակատարությունը, ինչպես նաեւ համանախագահ Բեռնար Ֆասիեի գործունեությունը: Շատ հետաքրքրական է, որ Ֆրանսիայի նախագահի՝ Ադրբեջան այցի շրջանակներում ֆնարկվելու է Ֆասիեի գործունեության հարցը, եթե հաշվի առնենք, որ վերջին լուրերի համաձայն նա շուտով կլքի այդ պաշտոնը, եւ թերեւս նրան փոխարինելու գա Հայաստանում մինչեւ հոկտեմբեր Ֆրանսիայի դեսպանությունը ղեկավարած Սերժ Սմեսովը:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Նոյեմբերին Բեֆլեւիշը նոր այց կկատարի Հայաստան

Երեկ, ինչպես կայքէջում նշել է «Հյուրիեթը», Հայաստանից հեռանալուց հետո Սամբուլում մամուլի ասուլիս է հրավիրել «Հզոր Թուրքիա» կուսակցության նախագահ Թունա Բեֆլեւիշը: Նա, ըստ թուրքական թերթի, ասել է, որ «Հայկական գաղտնի ծառայությունները չեն կարող վախեցնել իրենց աչքը», ուստի եւ շարունակելու են սահմանի բացմանն ուղղված նախաձեռնությունները:

Նա, ըստ թուրքական թերթի, հայտարարել է. «Հայաստանում մեր ձերբակալությունը, երկրից վտարումը չեն կարող հաշտեցման ձեռնարկումներից հետ պահել մեզ: Մտադիր եմ նոյեմբերի վերջերին «Արդարություն եւ բարգավաճում», Ժողովրդա-հանրապետական, ինչպես նաեւ «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցությունների, երիտասարդական կազմակերպությունների ղեկավարների հետ վերսին Հայաստան այցելել»: Վերջում նա հույս է հայտնել, որ Հայաստան-Թուրքիա սահմանը կբացվի 2011-ին, եւ ավելացրել է. «Այս տարածաշրջանում միակ խնդիրը Հայաստանի հետ Թուրքիայի փակ սահմանն է»:

Հ. Ղ.

Աղդամը դարձավ Ասկերանի թաղամաս

Արցախի կառավարության որոշմամբ Աղդամը վերանվանվել է Ակնա եւ դարձել Ասկերան քաղաքի թաղամասերից մեկը: Արցախի տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման վարչության պետ Սերգեյ Նասիբյանը, «Ազատություն» ռադիոկայանի փոխանցմամբ, ասել է, որ այդ որոշման նպատակն է «կարգավորել Աղդամում ապրող բնակիչներին հողահատկացումների գործընթացը եւ այլ կենցաղային հարցեր»: «Քանի որ կարգավիճակ առայժմ տրված չէ Աղդամին, այն որպես թաղամաս՝ Ակնա թաղամաս, մտնում է Ասկերանի քաղաքային համայնքի մեջ», ասել է Նասիբյանը:

Արցախի կառավարության տվյալներով՝ Աղդամում մշտապես բնակվում են 360-ից ավելի բնակիչներ, որոնք հիմնականում զբաղվում են հողագործությամբ եւ անասնապահությամբ:

Պետք է նկատել, որ մինչեւ այսօր Աղդամը, ի տարբերություն շրջակայքում գտնվող գյուղերի, կառավարության կողմից իրականացվող վերաբնակեցման ծրագրերում ընդգրկված չէր: Շրջանի բնակիչները, որպես հիմնական խնդիր, մատնանշել են հատկապես ջրի եւ հոսանքի բացակայությունը:

Հ. Ա.

Լարսը՝ 12-ժամանոց գրաֆիկով

Ռուս-վրացական սահմանի Վերին Լարսի անցակետի հյուսիսօսական հատվածն անցնում է աշխատանքի ձմեռային ռեժիմի: Ռուսաստանի անվտանգության դաշնային ծառայության սահմանապահ վարչության տեղեկատվության համաձայն, անցակետի աշխատանքային ժամերը 16-ից կդառնան 12:

Լարսի անցակետը 2010թ. մարտի 1-ից աշխատում էր ամառային գրաֆիկով՝ յուրաքանչյուր օր առավոտյան ժամը 6-ից մինչեւ 22-ը: Աշխատանքի ձմեռային գրաֆիկին անցնելու հետեւանքով անցակետի ռուսական հատվածը կաշխատի առավոտյան 7-ից մինչեւ 19:

Բացի այդ, որոշ սահմանափակումներ էլ կմտցվեն անցակետով փոխադրումների առնչությամբ: Ռուսաստանի անվտանգության դաշնային ծառայության սահմանապահ վարչության համաձայն, նոյեմբերի 1-ից մինչեւ մայիսի 1-ը Վերին Լարսով սահմանափակ տեղաշարժ կունենան կցովի հատվածներով բեռնատար մեքենաները եւ ուղեւորատար այն փոխադրամիջոցները, որոնք նախատեսված են ավելի քան 30 ուղեւորի համար:

Երեկ անցակետը փակ էր՝ տարերքի պատճառով ժայռաբեկոր էր ընկել՝ կիրճը դարձնելով անանցանելի:

Ա. Հ.

Հայկական ընտրություններ

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Անցած շաբաթավերջին լրագրողական մի խմբով ֆնարկում էինք ընտրական օրենսգրքի նոր փոփոխությունները, որոնք մինչեւ նոյեմբերի առաջին տասնօրյակ իբր պետք է հանրային ֆնարկումներով անցնեն, արվող առաջարկները հավաքվեն ԱԺ պեսաիրավական հանձնաժողովի նախագահ Դավիթ Հարությունյանի մոտ, դրանցից խելքին մոտիկները գուցեեւ հաշվի առնվեն, մանավանդ՝ խորհրդարանական ընդդիմությունը եւս առաջարկների իր փաթեթներն արդեն փոխանցել է, հետագայում գուցե լսումներ լինեն եւ այլն:

Ճիշտն ասած՝ ընտրական օրենսգիրքը անընդհատ փոփոխելու մերոնց ձգտումը (իսկ ավելի ճիշտ՝ բարեփոխելու եվրոպական պահանջը), ճիշտ է, խրախուսելի է, սակայն, մյուս կողմից, ընտրական գործընթացներին մոտիկից ծանոթ մարդկանց նիհիլիզմը բարեփոխվող ԸՕ-ի հանդեպ արդեն խոսուն է. հենց թեկուզ ընտրական գործընթացի ողջ «հմայքին» մշտապես ծանոթ լրագրողական լսարանում տեղի ունեցած ֆնարկումը մի շարք մտորումների տեղիք տվեց: Այդ ֆնարկման տեղը եւ վայրը բոլորովին կարեւոր չեն, կարեւոր չեն, թե անձնապես ո՞ր լրագրողներն ու բլոգերներն էին ներկա այնտեղ, կարեւորն այլ բան է՝ մի անգամ եւս հասկանալի դարձավ, որ ամենաստբեր մոտեցումների տեր լրագրողները մի շարք ֆոբիաներ ունեն՝ ճիշտ այնպիսիք, ինչպիսին հայ հասարակության տարբեր շերտերն ունեն: Իսկ դա լուրջ բան է, մանավանդ որ այդ ֆոբիաները հասարակությունում ոսկրացել են, եւ ոչ մի փոփոխված օրենսգիրք չի կարող դրանք արմատախիլ անել: Թվենք մի քանիսը. ա) որ ամենալավ ընտրական օրենսգիրքը չի կարող Հայաստանում նորմալ կամ գոնե տանելի ընտրություններ արդիականացնել, բ) որ հասարակության տարբեր շերտեր (այդ թվում՝ տարբեր լրատվամիջոցներ ներկայացնող լրագրողները) իրենց համակրանքներից եւ հակակրանքներից ելնելով են դիտարկում «ընտրություններ» երեւույթը, 3) որ նրանց մի մասը չի կարողանում կտրվել իր համակրած ուժի (լրատվամիջոցի) ուղղվածությունից եւ կենտրոնական այն փոփոխությունների վրա, որոնք իսկապես ընտրական գործընթացը կեղտից մաքրելուն կտանեն: Իսկ լրագրողաբլոգերական ֆնարկման ամենամեծ հայտնությունն այն էր, որ կային այնպիսիք, որոնք առաջարկ անելն ընդհանրապես անիմաստ էին համարում եւ անգամ դեմ էին ընտրատարածքները 50/50 (այսինքն՝ 50 տոկոսը՝ կուսակցական, 50 տոկոսը՝ պրոֆեսիոնալ եւ նշանակվի) սկզբունքով կազմավորելու առաջարկին, քանի որ նրանց կարծիքով՝ թո՛ղ իշխանությունն ամբողջությամբ կազմավորի բոլոր տեսակի ընտրական հանձնաժողովները, իր պատկերով եւ նմանությամբ, թող ամենավատթար, ամենակեղծված ընտրական գործընթացի պատկեր լինի ապագա խորհրդարանական ընտրություններում, ըստ այդմ էլ՝ վաս ընտրությունների ողջ պատասխանատվությունը թող ընկնի այս իշխանության վրա: Վա՜հ: Իսկ որ ժողովուրդը հերթական անգամ ապատիայի մեջ կընկնի, որ պետություն ու ժողովուրդ կտուժի՝ սա այդ մոտեցման հեղինակներին չի հետաքրքրում, նրանք նայում են այն ուժի պատուհանից, որը ներկայացնում են, մնացածի վրա թքած:

Մտահոգությունները արդեն տարիներ մնում են մտահոգություններ, դրանք փոխանցվում են ընտրությունից ընտրություն, եւ անկախ ընտրական օրենսգրքի կատարելագործման աստիճանից՝ չեն չեզոքացվում:

Տես էջ 2

ԱԶԳ

Ընթացիկ

Ասրախանը՝ դրական, Աբիեւը՝ «զենֆո՞վ»

Միջազգային տարբեր կազմակերպություններ, տարաբնույթ տարածաշրջանային ու տեղական կառույցներ հաճախ են խոսում խաղաղության՝ որպես ամենաբարձր արժեք կարեւորելու մասին: Սակայն առավել հաճախ այդ նույն խաղաղությունը պահպանելու հարցում որեւէ գործունեություն իրականացնելուց առաջ հաբվի են առնվում այնքան գործոններ, որ քայլ անելու հիմք չի մնում:

Իրավիճակը նույնն է Ադրբեջանի ռազմատենչ հայտարարությունների առնչությամբ, երբ տողերի տակ, վրա ու մեջ բոլորն ընդգծում են պատերազմով հակամարտությունը լուծելու փորձերի անընդունելիության, անթույլատրելիության մասին, բայց ադրբեջանական հայտարարությունների հեղինակներն այդպես էլ անպատիժ թունավորում են սեփական ժողովրդին ու սին հույսեր ծնում, թե Ադրբեջանը կարող է հարցը լուծել զենֆով:

Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հերթական հանդիպումը, այն էլ Ռուսաստանի նախագահի մասնակցությամբ, տեղի ունեցավ նախորդ շաբաթ՝ հոկտեմբերի 27-ին, Ասրախանում: Երկու կողմերն էլ դրական գնահատեցին հանդիպումը, ասել է թե բանակցային գործընթացից հատկապես եռակողմ հանդիպման ֆոնին դժգոհելու մասին ոչ մեկը չխոսեց ու ոչինչ չասաց:

Սակայն Ադրբեջանը եւս մեկ անգամ ապացուցեց, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներն առաջին հերթին, եւ միջազգային կառույցներն ու կազմակերպությունները, ինչպես նաեւ գերտերությունները՝ երկրորդ, թույլ են տալիս, որ ռազմական գործողություններ վերսկսելու մասին հայտարարությունները անպատիժ կրկնվեն՝ խորացնելով պետական քարոզչամեքենայի ներարկած թշնամանքն ու ագրեսիան ադրբեջանական հասարակության մեջ, որի արտահայտման մի օրինակ էլ վերջերս Իրանում ադրբեջանցի լրագրողի հարձակումն էր Մամուլի եւ լրատվական գործակալությունների միջազգային ցուցահանդեսում Հայաստանի տաղավարի վրա:

Հոկտեմբերի 25-29 Չինաստան կատարած այցելության ժամանակ Ադրբեջանի պաշտպանության նախարար Սաֆար Աբիեւը կրկին հայտարարել է, որ «եթե խաղաղ բանակցություններն արդյունք չտան, Ադրբեջանը կօգտագործի բոլոր միջոցները, այդ թվում՝ բանակը, վերականգնելու երկրի տարածքային ամբողջականությունը»:

Ա. Հ.

Երեւան-Աշտարակ ճանապարհը վերակառուցելու ցանկություն հայտնեցին 3 ընկերություններ

Տրանսպորտի եւ կապի նախարարությունում բացվեցին միջազգային մրցույթի առաջարկները

Ինչպես հայտնի է, Հյուսիս-հարավ ճանապարհի մաս կազմող Երեւան-Աշտարակ 11,7 կմ հատվածի վերակառուցման վերաբերյալ տրանսպորտի եւ կապի նախարարությունը միջազգային մրցույթ էր հայտարարել այս տարվա սեպտեմբերի 18-ին: Երեկ նախարարությունում հայտարարվեցին մրցույթի արդյունքները: Մինչ այդ տրանսպորտի եւ կապի նախարար **Մանուկ Վարդանյանը** հայտնեց, որ այս ճանապարհահատվածի վերակառուցման համար դիմել էին 13 կազմակերպություններ, բայց գրանցվել են 3 ընկերություն՝ ավստրիական, ամերիկյան եւ իսպանական: Ըստ նախարարի, նկատի ունենալով, որ առաջին անգամ միջազգային չափանիշներին համապատասխանող ճանապարհ են կառուցում, մինչեւ վերջ գործընթացն ընթանալու է հրապարակայնության սկզբունքով: Ուստի Մանուկ Վարդանյանը կոչ արեց բոլոր հայտնի ճանապարհաշինական ընկերություններին՝ մասնակցել հաջորդ մրցույթներին:

Այնուհետեւ ներկաները տեղեկացան մրցույթի մասնակից ընկերությունների գումարային առաջարկների մասին: Մասնավորապես, ավստրիական «Ստրաբագ ինտերնեշնլ» ընկերությունը Երեւան-Աշտարակ հատվածի վերակառուցման համար առաջարկել էր 51,1 մլն դոլար, ամերիկյան «Ֆելեսեֆնոլոջիս» ընկերությունը՝ 18,9 մլն դոլար, իսպանական «Էմ Ջի գրուպս» ընկերությունը՝ 22,6 մլն դոլար:

Արդյունքները հայտարարելուց հետո տրանսպորտի եւ կապի նախարարն ասաց, որ մրցույթների ամփոփման գործընթացը կտեւի 1 ամիս: Ներկայացված առաջարկները կներկայացվեն Հյուսիս-հարավ ճանապարհի կառավարման խորհրդի, ֆինանսավորող կառույցի՝ Ասիական զարգացման բանկի քննարկմանը, ապա հաղթող համարված ընկերության հետ կկնքվի ճանապարհի կառուցման պայմանագիրը: Ըստ Մանուկ Վարդանյանի՝ նախատեսվում է ճանապարհի կառուցման աշխատանքները սկսել եկող տարվա մարտին եւ ավարտել 2012-ի հոկտեմբերին:

Թե ո՞ր ընկերության առաջարկը կհամարվի լավագույնը Հայաստանի ճանապարհաշինության ոլորտում հայտարարված առաջին միջազգային մրցույթում, պարզ կդառնա ապագայում, բայց, ամենայն հավանականությամբ, ավստրիական ընկերության հնարավորությունները մեծ չեն: Նրա ներկայացրած գնային առաջարկը անհամեմատ թանկ է եւ 2,5-3 անգամ գերազանցում է մյուս ընկերությունների առաջարկներին:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Քահանա ձեռնադրվեցին 16 սարկավագներ

Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի եւ բարձրաստիճան հոգեւորականների, ինչպես նաեւ բազմախուռն հավատացյալների ներկայությամբ Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում հոկտեմբերի վերջին կիրակի օրը՝ ամսի 31-ին, ձեռնադրության խորհուրդ կատարվեց: Քահանա ձեռնադրվեցին 16 սարկավագներ: Նրանցից 12-ն ամուսնացյալ են, իսկ 4-ը՝ կուսակրոն քահանաներ, այսինքն՝ աբեղաներ: Ձեռնադրող արբազանը Արագածոտնի թեմի առաջնորդ Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյանն էր: Դիմելով նորաօծ քահանաներին՝ **Մկրտիչ արբազանն** ասաց. «Իբրեւ այսօրվա ամենամեծ պատգամ ձեզ ենք թողնում հայերեն առաջին նախադասությունը՝ «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»: Սիրելի՛ նորաօծ եղբայրներ, 3-րդ հազարամյակի շեմին ձեզ է պատիվ արված լինելու մեր ընտրյալ ժողովրդի անտեսանելի Աստծո թարգմանիչները: Անտեսանելի Աստծուն լավագույնս թարգմանելու ձեր կարողությունից է կախված մեր ժողովրդի ապագան: Եթե դուք լավ թարգմանիչներ եք, ուրեմն կենդանի է Աստված ու նրա զորությունն ի մեջ հայկազյան ցեղի»:

Ձեռնադրությունը Հայ առաքելական եկեղեցու յոթ խորհուրդներից է: Կիրակի օրը ձեռնադրման խորհրդի մեջ որպես խրատավիլակ հանդես էր գալիս Կոմիտաս վարդապետ Հովնանյանը: **Արման սարկավագ Ահարոնյանը**, որը Մկրտիչ արբազանի քարտուղարն է, բացատրեց, որ ձեռնադրության խորհրդի մեջ խրատավիլակն այն հոգեւորականն է, որը սարկավագներին ներկայացնում է ձեռնադրող եպիսկոպոսին: 16 սարկավագները, ձեռնադրվելով քահանա, ստացան նոր անուններ: Վեհափառ հայրապետն անձամբ մոտեցավ ու շնորհավորեց նորաօծ քահանաներին: Վերջում քահանաներին շնորհավորելու հնարավորություն ունեցավ նաեւ հավատավոր ժողովուրդը:

Նորաօծ քահանաներից **Մովսես աբեղա Սարգսյանը**, խոսելով իր ապրումների եւ զգացողությունների մասին, ասաց. «Երկար ենք սպասել այսօրվան ու երկար պատրաստվել: Հիմա հասել ենք արդյունքի, բայց սա վերջը չէ: Ամեն ինչ դեռ նոր է սկսվում»: «**Ազգի**» հետ զրույցում Մովսես աբեղան ամենից շատ կարեւորեց հետեւյալը. «Կա գիտակցումը, որ ունենք ամուր կամք՝ հաղթահարելու ամեն տեսակի փորձություններն ու դժվարություններն ի սեր մեր եկեղեցու եւ ի փառս Աստծո»:

Ի. Պ.

Գերմանիան կոչ է անում հետեւանքներ մուտքը Եվրոմիություն

Գերմանիայի արտգործնախարար Գվիդո Վեստերվելեն կոչ է արել, որ Ռուսաստանի, Ուկրաինայի ու Բելառուսի քաղաքացիները առանց վիզայի կարողանան այցելել Եվրոմիության անդամ երկրներ, հաղորդում է «Ազատություն» ռադիոկայանը՝ հղում անելով գերմանական DPA գործակալությանը:

Գերմանիայի արտգործնախարարը նշել է, որ մուտքի արտոնագիր տրամադրելու համակարգում անհրաժեշտ է «հիմնարար թարմ սկիզբ»:

«Արեւելյան գործընկերության երկրների ու Ռուսաստանի քաղաքացիների համար տեղաշարժվելու իրավունքը ուժգին խթան կհանդիսանա Արեւելյան Եվրոպայի երկրների սոցիալ-տնտեսական զարգացման համար», հայտարարել է Վեստերվելեն: Հիշեցնենք՝ Արեւելյան գործընկերության ծրագրում ընդգրկված է նաեւ Հայաստանը:

Գերմանիայի արտգործնախարարի ելույթի տեքստը նախօրոք տրամադրվել է մամուլին: Նա ելույթ է ունենալու Բեռլինի համաժողովում, որի կազմակերպիչը Գյոթեի անվան միջազգային մշակութային գործակալությունն է:

Հ. Ա.

Հայկական ընտրություններ

1-ին էջից

Տեսական խոսակցություններն ընտրական օրենսգրքի կառուցման երկու մոդելների վերաբերյալ՝ պրոֆեսիոնալ սկզբունքով կառուցվեն ընտրական հանձնաժողովները, թե՞ կուսակցական, Հայաստանում չեն կարող իրական ընտրական արդարության երաշխավորը դառնալ, քանի որ թե՛ մեկի, թե՛ մյուսի համար Հայաստանն, ինչպես միշտ, պատրաստ չէ. ընտրական հանձնաժողովի (ասենք՝ ԿԸՀ-ի) անկախ-անկուսակցական անդամի համար թեկնածու ներկայացնող գերատեսչությունը (ասենք՝ դասական դեպարտամենտը), դպրոցական երեխան անգամ գիտե, որ իրականում անկախ չէ եւ սովորաբար ներկայացնում է ամենահիշող կուսակցությանը, իսկ կուսակցության կողմից հանձնաժողով ուղարկված անդամը կյանքը կտա հանուն իր կուսակցության, էլ ո՞ւր պիտի ընտրության արդարության մասին մտածի: Կամ՝ երկրի առաջին դեմքերն, ո՞վ չգիտի, որ հենց ընտրությունների քարոզչության շրջանում են բոլոր նորակառույցները բացելու, բոլոր ժապավենները կտրելու, իսկ դրա մասին ընտրական օրենսգիրքը լռելու է: Կամ՝ թեկուզ օդանավակայանից կարելի է մեկնող-չվերադարձողների թիվն ընտրողների թվից հանել ու այդքանով գոնե պակասեցնել ընտրողների պաշտոնական թիվը՝ դա էլ չենք անում: Ու մինչ լրագրողները տոչորվում էին, որ ախ ընտրական օրենսգրքի փոփոխությունների հանրային քննարկման պահանջը չի կատարվում, քանի որ ոչ ոք հանրության, ոչ էլ նրա ներկայացուցիչների հետ հրապարակավ, ասենք՝ հեռուստատեսային բանավեճի տեսքով, ոչ հանդիպում է, ոչ էլ հանրության մեջ հնչող տեսակետները հասանելի են դառնում Դավիթ Հարությունյանին, կամ ընտրական օրենսգրքի փոփոխությունները գոնե տպագիր տեսքով կամ մասնագետի մանրամասն բացատրություններով հասարակության ակտիվ շերտի սեփականությունը չեն դառնում (մեր 2 տասնյակ հեռուստալիքներով գոնե կամ մի 10 հազար օրինակով բյուլետենի տեսքով):

Սակայն ընտրական օրենսգիրքը բարեփոխողները եւ բարեփոխման պահանջ ներկայացնողները երեւի չեն էլ պատկերացնում հայկական հնարամտության ողջ արիալը՝ ինչպիսի ընտրական օրենսգիրք էլ գոյություն ունենա, ընտրությունները հնարավոր լինի անցկացնելու բացառապես հայկական տարբերակով:

Իսկ հայերիս հնարամտությունն, իրոք, սահման չի ճանաչում (Պզոյի խմբի ողջ մեքենայությունը ձեզ օրինակ): Օրինակ՝ դուք կպատկերացնե՞ք, որ, ասենք, որեւէ մարզում բժշկական անվճար հեսազոսություն կարելի է մատուցել սեփական կուսակիցներին՝ կուսակցական ցուցակներով կամ գոնե համակիրներին: Կամ կպատկերացնե՞ք, որ խաղողի մթերումը կարելի է անել կուսակցական ցուցակներով կամ գոնե կուսակցություն ընդունվելու խոստման դիմաց: Հիմա ի՞նչ ընտրական օրենսգիրք, կամ ի՞նչ բարեփոխում կարող է դրա դեմն առնել: Ոչ մի, եթե անգամ լինի կատարելության էտալոն ընտրական օրենսգիրք: Ահա մերոնք, ապագա խորհրդարանական ընտրություններից մեկուկես տարի առաջ, փորձում են միմյանցից առաջ ընկնել ապագա ընտրողներին իրենցով անելու կամ ընտրաբաշխի կատարելագործված ձեւերի էմոիրիկ որոնումով՝ սրա դեմ ի՞նչ կարող է անել անգամ ամենաբարեփոխված ընտրական օրենսգիրքը: Իսկ որ ասում ենք՝ ընտրությունների հաջորդ օրը ընտրություններին մասնակցած մարդկանց ցուցակների հրապարակումն ապահովեք հենց օրենսդրությամբ, եթե ուզում եք կեղծիքների դեմն առնել, գոնե այս դեպքում կզգուշանան արտագնա աշխատանքի մեկնած 700-800 հազար ընտրողի լուֆթն օգտագործող կեղծողները, կեղծման թվերը մի քանի անգամ գոնե կպակասեն, ասում են՝ մարդու իրավունքների խախտում է, անձի տվյալներ չի կարելի հրապարակել. եղբայր, Հայաստանի ընտրողների ցուցակները՝ գրանցման վայրով, անձնագրի համարով տեղադրված են ԿԸՀ կայքում, սրանք անձի տվյալ չե՞ն, որ դեռ անցյալ ընտրական օրենսգրքով հրապարակել եք, էլ ի՞նչ ձեւեր, էլ ինչ՝ թե սահմանադրական դատարանը դա կմեկնաբանի որպես անձի տվյալների գաղտնիության հրապարակում եւ հակասահմանադրական կճանաչի: Ասեք՝ չե՛նք ուզում կեղծիքի լուֆթը փակենք, պրծեք, էլի:

Իսկ ընտրական օրենսգրքի բարեփոխված տարբերակի մասին դեռ հանձնաժողովի նիստեր կլինեն, գուցե լսումներ՝ տեղը-տեղին կպատմենք. ո՞նց չենք պատմի մեր ընտրական օրենսդրության բարեփոխման մասին՝ մանրամասնորեն, եվրոպացիներին զարմացնելով, ըհը:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի: Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

1-ին էջից

Այսպես. այս տարվա հունվար-սեպտեմբեր ամիսների տվյալներով ներմուծումը գերազանցում է արտահանմանը ավելի քան 3,8 անգամ: Ընդ որում, եթե դիտարկենք մեր արտաքին առեւտրի կառուցվածքը, ապա պարզ կդառնա, որ ՀՀ-ի արտահանման հիմնական ուղղությունը հումքային ռեսուրսների վաճառքն է, եւ ընդհանուր առմամբ արտահանվող ապրանքների ցանկը մեծ չէ, իսկ փոխարենը ներմուծվում են լայն սպառման ապրանքներ: Տպավորությունը այնպիսին է, որ մենք գնալով նմանվում ենք լատինամերիկյան ինչ-որ հետամնաց երկրի, ասենք Հոնդուրասին, որը արտահանում է հիմնականում բանան եւ ցինկ, այսինքն՝ հումք: Եվ մենք էլ ասիճանաբար դառնում ենք «բանանային երկիր»: Մեր երկրի արտահանման ծավալների կեսից ավելին հանքանյութ է: Մեր տնտեսությունը հիվանդ է: Ախտորոշումը՝ ներմուծախեղդ վիճակ: Հիվանդին բուժելու փոխարեն մենք նրա կյանքը երկարացնելու համար ցավազրկող թմրադեղ ենք սրսկում՝ սփյուռքի, արտագնա աշխատանքի մեկնած մեր հայրենակիցների ուղարկած տրանսֆերտների եւ դրսից ստացվող վարկերի տեսքով: Եվ եթե հանկարծ մի օր այդ մարդիկ որոշեն գոնե մեկ ամիս փող չուղարկել, կունենանք տնտեսական խայտառակ իրավիճակ: Տրանսֆերտների ծավալները կազմում են տարեկան 4,5 մլրդ դոլարից ավելի: Այդ 4,5 միլիարդը պետք է գոյանար արտադրության եւ արտահանման շնորհիվ, մեր երկրում ստեղծելով բազմաթիվ աշխատատեղեր: Սակայն, այդ փողը որպես օգնություն ստանալով, այսօր մեր բնակիչները գնում են ներմուծված ապրանքներ: Այսինքն՝ այդ փողը ինչպես գալիս, այդպես էլ երկրից դուրս է գնում, չստեղծելով աշխատատեղեր, բարեկեցություն: Փաստորեն մեր քաղաքացիները, գնելով ներմուծված ապրանքներ, բարեկեցություն են ստեղծում այդ ապրանքները արտադրող երկրների համար:

Վերջերս ՀՀ ԱԺ-ն ընդունեց մի օրենք, որով հավասարեցվում է մեր տնտեսության որոշ կարեւոր ճյուղերի ներմուծման եւ տեղական արտադրության համար հարկային բեռը: Ըստ այդմ մենք, արտահանումը եւ հայրենական արտադրությունը խրախուսելու փոխարեն, ընդունում ենք այնպիսի օրենքներ, որոնք խթանում են ներմուծումը: Ներմուծվող ապրանքատեսակներին ցույց է տալիս, որ Հայաստան են բերվում ոչ միայն այն ապրանքները, որոնց բացակայությունն օբյեկտիվորեն ստիպում է ձեռք բերել դրանք դրսից (վառելիք, կենցաղային տեխնիկա եւ այլն), այլ նաեւ այնպիսի ապրանքներ են մուտք գործում հայաստանյան շուկա, որոնք այսօր էլ ներքին շուկայում առաջարկվում են բազմաթիվ տեղական արտադրողների կողմից: Խոսքս վերաբերում է գյուղատնտեսական ապրանքներին, գրեթե բոլոր պարենային ապրանքատեսակներին, թեթեւ արդյունաբերության ոլորտին եւ այլն: Սա ռեգրեսիա ապրող հասարակության ու պետության ապրելաոճ է, որը սպառնալիք է բոլորիս համար: Ճիշտ է, տեղական արտադրություն կա, բայց դա մեր հնարավորությունների չնչին մասն է: Երբ ներմուծողը, որոշ չինովնիկների օգնությամբ, ճնշում է գործադրում տեղական արտադրողի վրա, որի պատճառով վերջինս կորցնում է իր շուկան, երկրում մեծանում է գործազուրկների թիվը: Ներմուծողի պատճառով իր աշխատանքը կորցրած քաղաքացին այլեւս աշխատավարձ չի ստանում, կորցնում է գնողունակությունը եւ այլեւս չի կարող գնել նաեւ ներմուծված ապրանքները: Ներմուծողը, ոչնչացնելով տեղական արտադրությունը, կորցնում է գնողունակ սպառողական պահանջարկը եւ ինքն էլ է սկսում վնասներ կրել: Ցանկալի է, որ մեր ներմուծողները հասկանան այս պարզ ճշմարտությունը:

Ֆինանսների մյուս աղբյուրը դրսից ստացվող վարկերն են, որոնց շնորհիվ աճում է երկրի արտաքին պարտքը: 2010 թվականի վերջին մեր արտաքին պարտքը կհասնի 3 մլրդ 617 մլն դոլարի, ինչը մեր ՀՆԱ-ի 41,9 տոկոսն է: Այս առումով էլ վիճակը գնալով ավելի վտանգավոր է դառնում: Եթե արտաքին պարտք ՀՆԱ հարաբերակցությունը հասնի 50%-ի, մենք կհայտնվենք վտանգավոր ֆինանսական գոտում: Կանխատեսվում է, որ 2013-ին արտաքին պարտքը կկազմի 4 մլրդ 089,7 մլն դոլար, որի սպասարկման համար պետությունը պետք է ծախսի 255,6 մլն դոլար: Որտեղից պետք է գտնենք գումարներ արտաքին պարտքի ահագնացող աճը սպասարկելու համար: Պատկան մարմինները հույսը դնում են արտահանման աճի վրա: Արտահանման աճի առումով նրանց կանխատեսումները շատ լավատեսական են: Ինչի հաշվին է աճելու արտահանումը: Հետագա տարիներին արտահանման նման աճ ունենալու համար պետությունը այսօր արդեն պետք է վարեր հայրենական արտադրության եւ արտահանման ա-

ջակցության եւ խրախուսման քաղաքականություն: Իսկ այսօրվա միտումը տեղական արտադրությունը խեղդելն է եւ ներմուծման խրախուսումը: Պետական տարբեր գերատեսչությունների խնդիրը պետք է լիներ որոնել եւ գտնել շուկաներ հայկական ապրանքների համար: Առեւտրաարդյունաբերական պալատը, Զարգացման հայկական գործակալությունը, Էկոնոմիկայի նախարարությունը, ԱԳՆ-ն՝ դեսպանատներում տնտեսական կցորդների օգնությամբ, պետք է լծված լինեին այս գործին: Աշխարհի բոլոր ֆիզ թե շատ զարգացած երկրներում այս գործը դրված է լուրջ հիմքերի վրա: Նախանձելի է Բելառուսի օրինակը: Հայաստանում բացված Բելառուսի առեւտրի տան ներկայացուցիչները կաշվից դուրս են գալիս իրենց երկրում արտադրվող ապրանքները Հայաստանի տարբեր ընկերություններին վաճառելու համար:

Ժամանակին մենք լիովին անպատրաստ նետվեցինք Առեւտրի համաշխարհային կազմակերպության գիրկը: Մեր հանձարեղ տնտեսագետ չինովնիկները այդ տարիներին ուզում էին, ինչպես ժողովուրդն է ասում, ունքը սարքել, սակայն աչքն էլ հանեցին, վտանգելով մեր հետագա զարգացումը: Ասածիս վկայությունն է արտահանում-ներմուծում տոկոսային հարաբերակցության դինամիկան: Եթե 2002 թվականին, երբ մենք դեռ ԱՀԿ անդամ չէինք, արտահանումը կազմում էր արտաքին առեւտրի 36%-ը, իսկ ներմուծումը՝ 64%-ը, ապա 2009 թվականին արդեն ունենք շատ ավելի վատ պատկեր. արտահանում՝ 18%, ներմուծում՝ 82%, այսինքն՝ տոկոսային հարաբերակցությունը կրկնակի նվազել է ի վնաս արտահանման: 2010 թվականը դեռ չի ավարտվել, տվյալները դեռ չեն ամփոփվել, սակայն հույս ունենք, որ այս տարի պատկերն ավելի հուսադրող կլինի: ԱՀԿ-ի գոյությունը ձեռնտու է միայն զարգացած տնտեսություն ունեցող երկրների համար, իսկ նորերին անդամագրում են հնարավորինս վատ պայմաններով: Թույլ տնտեսություն ունեցող երկրները անդամակցում են առավելապես իմիջի համար, սակայն անդամագրվելուց հետո հայտնվում են ԱՀԿ-ի ճնշման տակ եւ ստիպված են լինում, այդ կազմակերպության թելադրանքով, ընդունել այնպիսի օրենքներ, որոնք խոչընդոտում են տեղական արտադրությանը եւ գյուղատնտեսությանը: Փաստորեն մեր ձեռքից կարող են խլել մեր շուկան, իսկ մենք ստիպված կլինենք ենթարկվել:

Եվս մեկ անհանգստացնող հանգամանք. Հայաստանում պետական գնումների տարեկան ծավալը կազմում է 182 մլրդ դրամ: Պետական գնումների կառուցվածքում տեղական ապրանքների բաժինը մոտ 20% է, իսկ ներմուծված ապրանքների բաժինը՝ մոտ 80%: Սա ցավալի փաստ է: Ընդ որում, որեւէ միջազգային կազմակերպություն՝ ԱՀԿ, ԱՄՀ կամ ՀԲ, չի կարող ազդեցություն ունենալ երկրի բյուջեի եւ բյուջեի ծախսերի վրա: Անհասկանալի է, թե մեր չինովնիկներն ինչու են պետական բյուջեի փողերով նախընտրում գնել ներմուծված ապրանքներ:

Իմ կողմից մատնանշված պարամետրերը հիմք ընդունելով, կարելի է ասել, որ Հայաստանի մակրոտնտեսական ցուցանիշները, մեղմ ասած, մտահոգիչ են:

Ակնհայտ է, որ այս վիճակը նպաստում է արտագաղթի աճին, որի հետեւանքով կրճատվում են ներքին շուկայի ֆիզիկական ծավալները: Արդեն հեռուստատեսությամբ է գովազդվում ամերիկյան Green Card-ի խաղարկությունը: Ռուսաստանում մեծ թափով ձեռնամուխ են եղել Սիբիրի վերաբնակեցման պետական ծրագրի իրականացմանը: Եվ մեր բազմաթիվ հայրենակիցներ այս ծրագրով մեկնում են Ռուսաստան՝ մշտական բնակության: Հայաստանից հիմնականում մեկնում են արհեստավարժ մասնագետները, բնակչության ակտիվ զանգվածը, քանի որ չեն կարողանում իրենց ունակությունները կիրառել հայրենիքում: Վերջերս Կանադա մշտական բնակության մեկնեց հայտնի երաժիշտ, ՀՀ վաստակավոր արտիստ, Հայջազբենդի գեղարվեստական ղեկավար Արմեն Մարտիրոսյանը: Բոլոր ասպարեզներից հեռանում են լավագույն մասնագետները: Հայտնի երգի բառերով ասած. «Լավագույն տղերքը հեռանում են, օտար ափերում բախտ որոնում»: Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության տվյալներով, 2009-ին Հայաստանից հեռացել եւ չի վերադարձել 52198 մարդ, իսկ արդեն 2010-ի 9 ամիսների տվյալներով՝ 69 890 մարդ: Իմ կանխատեսմամբ, 2020 թվականին սկսվելու է մասնագիտական-կադրային աղետալի սով: Ուղեղների այս արտահոսքը իհարկե նոր չի սկսվել, սակայն գնալով ահագնանում է:

Փորձը ցույց է տվել, որ բոլոր ազգերն ու պետությունները զարգանում կամ հետընթաց են ապրում հանրային կյանքի կազմակերպման մոդելների, նորմալ կամ անկատար օրենսդրության եւ այլ նմանատիպ հանգամանքներով պայմանավորված: Դա է պատճառը, որ, օրինակ, Հյուսիսային Կորեան թերզարգացած է, իսկ Հարավային Կորեան հարյուր տարով առաջ է անցել եւ միջազգային շուկայում հայտնի է իր բրենդներով ու որակյալ արտադրանքով: Նույն ազգն է, նույն լեզվով է խոսում, բայց տարբեր համակարգեր են ստեղծված, եւ արդյունքներն ակնհայտ են:

Խնդիրն այն է, որ օտար երկրներում գործարարությամբ զբաղվող հայը կարողանում է հաջողության հասնել այն պատճառով, որ միջավայրն է նպաստավոր: Հետեւաբար մենք պետք է անենք այնպես, որ Հայաստանում հնարավորություններ ստեղծվեն հայի գործարար որակների բացահայտման համար: Իսկ դա նշանակում է պետության տնտեսական քաղաքականության փոփոխություն, որը կխթանի տեղական արտադրությունը, արտահանման խրախուսման միջոցառումներ եւ ներմուծող-պետական չինովնիկ, կոռուպցիոն մեծ ռիսկեր պարունակող հարաբերությունների վերացում, որը ամենալուրջ խոչընդոտն է տեղական արդյունաբերության զարգացման համար:

Միայն արտադրող եւ արտահանող Հայաստանը շանս ունի իր արժանավոր տեղը գրավելու տարածաշրջանում, աղահովելու իր անվտանգությունը եւ ՀՀ քաղաքացիների բարեկեցությունը: Այլ ճանապարհ չկա: Պետք է որ առաջ գործի անցնել եւ կյանքի կոչել տնտեսական հայրենասիրության գաղափարը:

ԿԱՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՀՀ ԱԺ պատգամավոր,
ՀՀ ԱԺ տնտեսական հարցերով
մշտական հանձնաժողովի անդամ

«Իդեալ համակարգի» առավել ընդարձակ եւ հարմարավետ խանութ-սրահ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում

Շինանյութի շուկայում ներմուծելով քաղաքակիրթ առեւտրի արդի սկզբունքները՝ «Իդեալ-համակարգը» շարունակում է հայ սպառողին ներկայացնել եվրոպական երկրներում ընդունված հարմարավետության եւ հասանելիության ժամանակակից հայեցակարգեր:

Ունենալով տարածաշրջանում խանութ-սրահների ամենամեծ ցանցը՝ այժմ «Իդեալ համակարգը» հանդես է գալիս իր հերթական անակնկալով՝ մայրաքաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի բնակիչներին հնարավորություն ընձեռելով հարմարավետության նոր չափանիշներով կատարելու շահավետ գնումներ Ռաֆֆու 55 հասցեում վերաբացված խանութ-սրահից: Վերջինիս պաշտոնական բացումը տեղի ունեցավ 29.10.10-ին: Խանութ-սրահն այժմ բնակիչներին է ներկայանում «Իդեալ համակարգին» հատուկ չափորոշիչներով, որոնց հիմքում ընկած

են քաղաքակիրթ առեւտրի միջավայրի ստեղծումը, ընդարձակ եւ լուսավոր սրահներում ապրանքների ընտրության հարմարավետության ապահովումը եւ սպասարկման բարձր մակարդակի կազմակերպումը:

Ինչպես բոլոր, այդ թվում նաեւ Մալաթիա-Սեբաստիա համայնքի խանութ-սրահում «Իդեալ-համակարգը» իր սպառողներին է ընձեռում խնայելու հնարավորություն՝ առաջարկելով բոլոր գնային միջակայքերում ամենաորակյալը եւ անընդհատ հանդես գալով գրավիչ նախաձեռնություններով ու անակնկալներով: «Իդեալ-համակարգը» հայ սպառողներին ներկայացնելով շինարարական ոլորտի վերջին ձեռքբերումները, ինչպիսիք են եվրոպական շուկայի համար եզակի սալիկների նմուշները, առաջարկում է ավելացնել բարիքները. համակարգի խանութ-սրահներից ձեռք բերելով հատուկ գնահատերով նորաձեւ եւ նրբաճաշակ սալիկներ, հայ սպառողը կստանա նվեր՝ նույն սալիկներից եւս 50 տոկոս անվճար:

Այսօր «Իդեալ-համակարգի» խանութ-սրահները առաջարկում են ավելի քան 30 հազար ապրանքատեսակ եւ ավելի քան 100 ծառայություն: Համակարգի խանութները գործում են նաեւ մարզերում՝ Գյումրիում, Վանաձորում, Արտաշատում, Արմավիրում, Էջմիածնում եւ Մարտունիում:

Հավելենք, որ ընկերության ծառայություններից բնակիչները կարող են օգտվել անմիջապես իրենց բնակարաններից կամ աշխատավայրից՝ այցելելով www.idealsystem.am համացանցային կայքը: Պատվիրված ծառայությունները կմատուցվեն սեղմ ժամկետներում՝ հմուտ, փորձառու վարպետներից: Փաստորեն սպառողները կարող են տնտեսել իրենց ժամանակն ու ջանքերը, որոնք պետք է ուղղեին անհրաժեշտ վարպետներ փնտրելուն կամ մասնագիտական օգնություն ստանալուն:

«Իդեալ-համակարգի» մասին լրացուցիչ ինֆորմացիա ստանալու համար կարող եք այցելել www.idealsystem.am կայքը:

Տ. Ա.

Հայագիտության մերօրյա հսկան

Հովհաննես Բարսեղյան

Օրերս լրացավ մեծավաստակ լեզվաբան, տաղանդավոր հայագետ, հայրենագիտության եւ ուսուցման հայրենանվեր գործի անխոնջ կազմակերպիչ եւ նվիրյալ, եվրոպական երկրների գիտության ու արվեստի միջազգային ակադեմիայի իսկական անդամ, Երեւանի պետական համալսարանի երկարամյա դասախոս, դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ, իսկական հայրենասեր, երկրի ազնվագույն քաղաքացի, իր ժողովրդի արժանավոր որդի, վսեմաշուք գիտնական Հովհաննես Խաչատուրի Բարսեղյանի ծննդյան 90 եւ գիտամանկավարժական բազմաբեղուն գործունեության 65-ամյակը: Ցավազանց ուշագրավ է այն անհերքելի իրողությունը, որ անկշռելի վաստակի տեր, համընդհանուր սեր եւ ակնածանք վայելող մեծահռչակ անձնավորության հոբելյանն անցած ձիգ տարիների ընթացքում գեթ մի անգամ չի նշվել: Գուցե այդպես սպասվել է այն պատճառով, որ մարգարիտի փառքը փրփուրն է խլում:

Հովհաննես Բարսեղյանի անցած իմաստուն եւ փառավոր ճանապարհը ծանրաբեռնված-ճոխացած է գիտական անընդգրկուն-համապարփակ վաստակով՝ անթառամ ձեռքբերումներով, որոնք մեկընդմիշտ ուսանելի կմնան ե՛ւ ներկա, ե՛ւ գալիք սերունդների համար: Նրա հեղինակած գրքերը այսօրվա եւ ապագա սերունդների անմրցակից զարդն են: Նա հայագիտության տիտան Հրաչյա Աճառյանի տաղանդավոր սաներից է, իսկ հետագայում նրա գործի մեծաշնորհ եւ արժանավորագույն շարունակողներից:

Նա մեր ժողովրդի մեկ այլ հռչակավոր զավակի՝ Հայաստանի կոմկուսի առաջին քարտուղար Յակով Զարոբյանի հայրենի ուսուցիչն էր: Հ. Բարսեղյանի անմիջական խորհրդով եւ խնդրանքով էլ մայրենի դասընթացի ավարտից հետո, քարտուղարը ինքնամոռաց հափշտակությամբ եւ սիրով առաջին անգամ ընթերցել է «Սամվել», «Վարդանանք», «Պաղ թագավոր» պատմավեպերը: Այդ հանգամանքը մեծապես նպաստել է կուսակցական եւ պետական խոշոր գործչի հայրենասիրական ոգու էլ ավելի բյուրեղացմանը:

Նրանց մտերմությունը շարունակվել է շատ երկար տարիներ: Բարսեղյանը, մոտիկից ճանաչելով Զարոբյանին, հիացած էր նրա բացառիկ ընդունակություններով եւ նրան բնութագրում է որպես խիզախ, ազնիվ, պարզ ու համեստ անձնավորության: Արժանի ձեւով նա վայելում է մեր ժողովրդի սերն ու հարգանքը:

Հովհաննես Բարսեղյանի համար Երեւանի պետական համալսարանը սրբազան կրթօջախի արժեք ուներ, թանկ, անգնահատելի, հարազատ օջախի չափ: Համալսարանի պատիվն ու հեղինակությունը նա համարում էր իրենը:

Յուրաքանչյուր սեպտեմբերի 1-ին մտնելով առաջին կուրսեցիների լսարան՝ ողջույնից հետո պատգամել է. «Սիրելի՛ ուսանողներ, համալսարանը ձեր տունն է, սրբազան օջախը, մեր ոգու աղոթարանը: Բոլորով պարտավոր ենք դողալ նրա պատվի, հեղինակության համար, մեր բոլոր գործերում հաշվետու, պատասխանատու լինենք նրան, սիրով, պատրաստակամությամբ խոնարհվենք նրան: Հրաչյա Աճառյանի, Մանուկ Աբեղյանի, Արսեն Տերտերյանի նման գիտնականները, գարուն թե ամառ, աշուն թե ձմեռ համալսարանի շենքին մոտենալիս գլխարկները հանում էին, խոնարհվում, նոր միայն ներս մտնում: Սիրելի՛ ուսանողներ, եկե՛ք հավատարիմ լինենք մեծ գիտնականների սրբազան սովորույթին, չէ որ համալսարանը մեր իմացության, մեր ոգու տունն է, այստեղ Մեսրոպ Մաշտոցի ոգին է թագավորում: Համալսարանն իմացության, ոգու սրբազան թագավորություն է...»:

Խստապահանջ, անզիջում էր նախ իր, նոր միայն գործընկերների եւ ուսանողների հանդեպ. աչք չէր փակում աչքակապության, ամենաթողության, թափթփվածության, ձեւական-ցուցադրական հայրենասիրական նկրտումների հանդեպ, վարքագիծ-կենսադիրքորում, որն այսօր, ցավոք, հարգի չէ:

Նա ձայների երկու երրորդով ընտրվել է Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի իսկական անդամ: Սակայն, որքան էլ անհավատալի, մինչեւ օրս անհասկանալի պատճառներով, հարցը չի սպացել իր վերջնական լուծումը, եւ դա այն դեպքում, երբ նա միաձայն ընտրվել է Եվրոպական միջազգային ակադեմիայի իսկական անդամ, ակադեմիա, որի անդամներից 30-ը Նոբելյան մրցանակի դափնեկիրներ են: Ինչպես կրկին չվերհիշել. խորքում գտնվող մարգարիտների փառքը խլող եւ վայելող փրփուրների անսասան գոյությունը:

Մեր եւ գալիք ժամանակների փառավոր լեզվաբանը ծնվել է 1920թ. Թալինի շրջանի Մասսարա գյուղում:

Խաչատուր հայրը, որը տոհմիկ հողագործ էր, քաջ գիտեր ուսման, գիտության, գրի եւ գրականության արժեքը, անլուր զրկանքների գնով ամեն ինչ արել է որդու կանոնավոր ուսումնառության համար: Հայրենի գյուղից հետո ուսումնառությունը շարունակել է Թալինի միջնակարգ դպրոցում, որն ավարտել է 1938թ. գերազանց առաջադիմությամբ: Նրա ուսուցիչները դժվարանում էին կողմնորոշվել, թե Հովհաննեսի գիտելիքները, մասնավորապես, ո՞ր առարկայի գծով էին խորացված՝ մաթեմատիկայի՞, ֆիզիկայի՞, թե՞ բնագիտության:

Իսկ երբ նախապատվությունը տվեց բանասիրությանը, մանկավարժներից ոչ ոք չզարմացավ. լրջությունը, ինքնավստահությունը, գիտելիքների հարստությունն ու պրպտող միտքը բոլոր ֆակուլտետներում էլ իրենց վճռական խոսքը կասեին: Իզուր չէր, որ բարձր հեղինակություն եւ մեծ ճանաչում ունեցող լեզվաբանները սիրով եւ հարգանքով նրան գնահատեցին «Թալինի Խաչատուր Աբովյան»: Այս յուրօրինակ ու պատվավոր գնահատականին Հովհաննեսը արժանացել է համալսարանի դեռեւս առաջին կուրսում: Երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, Հ. Բարսեղյանը 3-րդ կուրսի ուսանող էր. նա կամավոր մեկնում է բանակ: 1941թ. հուլիս-1942թ. հունվար ամիսներին սովորել է Բաքվի հեծեւակային դպրոցում: Լեյտենանտի կոչումով ավարտելով այն՝ զինվորական կրթությունը շարունակել է Թբիլիսիի հրաձգային բարձրագույն դասընթացներում, որտեղից 1942թ. ապրիլին ուղարկվել է Ղրիմի ռազմաճակատ եւ որպես վաշտի հրամանատար ծառայել Զաքյանի ղեկավարած հայկական դիվիզիայի կազմում: Մասնակցել է Կերչի շրջանում մղվող ծանր ու արյունալի մարտերին: 1942-43թթ. այլ զորամասերի կազմում մասնակցել է Յուսիսային Կովկասում շարունակվող ճակատամարտերին: Ազովի մերձափնյա կռիվների ժամանակ երրորդ անգամ ծանր վիրավորվելուց հետո զորացրվել է եւ նշանակվել Երեւանի Հայկական մանկավարժական ինստիտուտի ռազմագիտության ամբիոնում՝ ռազմագիտության դասախոս:

1943-44թթ. բարձր առաջադիմությամբ ավարտել է համալսարանական ուսումնառությունը: 1945թ. ընդունվել եւ 1948թ. ավարտել է համալսարանի ասպիրանտուրան՝ միաժամանակ աշխատելով համալսարանի հայոց լեզվի ամբիոնում որպես դասախոս:

1947թ. նա ընդունվել է կոմունիստական կուսակցության շարքերը որպես անդամ եւ ակտիվորեն մասնակցել բուհի հասարակական-քաղաքական աշխատանքներին: Կուսակցական ժողովներում նրա բոլոր ելույթներն անխտիր ավարտվել են բուռն ծափահարություններով. վճռական էր, ճշմարիտ, անարդարություններ չհանդուրժող, թերությունների ու բացթողումների համար չէր խնայում անգամ հանրապետության ղեկավարներին: Ժամանակները չար էին, ճշմարտություն չսիրող ղեկավարները հաշվեհարդար էին տեսնում նման համարձակների հետ:

Եվ ահա Հ. Բարսեղյանին հանդուգն ելույթների համար արտաքսում են համալսարանից եւ աշխատանքի են ուղարկում Երեւանի հեռակա մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի ամբիոնում՝ որպես դասախոսի: Հեռակա մանկավարժական ինստիտուտը այդ տարիներին դարձել էր «ախտավայր», այնտեղ էին ուղարկվում բոլոր այն դասախոսները, որոնք հանդգնել էին քննադատել իշխանություններին:

Չնայած այդ ամենին, Հ. Բարսեղյանն ընտրվում է հեռակա մանկավարժական ինստիտուտի կուսկոմիտեի քարտուղար, որն, իհարկե, վերեւների ուրովը չէր:

1958 թվականից Հ. Բարսեղյանը կրկին համալսարանում էր, կրկին հավատարիմ իր դիրքորոշումներին, մտքի եւ խղճի ձայնին, ուր եւ աշխատեց, առանց ընդհատումների, մինչեւ իր ակտիվ գիտական աշխատանքների ավարտը, որը կես դարից ավելի է, իմացության անսպառելի ծովից, իմացության մարգարիտներ պարգեւելով հազարավոր ուսանողների:

1952թ. պաշտպանել է թեկնածուական, 1981թ. դոկտորական դիսերտացիա: 1955թ. նրան տրվել է դոցենտի, իսկ 1983թ. պրոֆեսորի կոչում: 1970թ. գիտամանկավարժական բեղմնավոր գործունեության համար Հ. Խ. Բարսեղյանին շնորհվել է «Հայկական ԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ» պատվավոր կոչում: Նա հեղինակ է 15 մենագրությունների ու բառարանների, մի քանի տասնյակ գիտական հոդվածների: Հ. Բարսեղյանի «Հայերենի խոսքի մասերի ուսմունքը» մենագրությունը նվիրված է խոսքի մասերի տեսության առաջացման եւ զարգացման պատմությանը: Այն ընդգրկում է 5 րդ դարից մինչեւ մեր օրերն ընկած ժամանակաշրջանը: Աշխատությունը հրաժարակվել է նաեւ ռուսերեն լեզվով: Նրա համահեղինակությամբ ստեղծված հայոց լեզվի դպրոցական դասագրքերը հաջողությամբ ծառայել են հայկական դպրոցներին ավելի քան քառորդ դար: Մշակել է բուհական հայագիտական մի քանի առարկաներ ու դասընթացներ, կազմել նրանց ծրագրերը:

Դասախոսել է հայոց լեզվի պատմություն, հայ գրական լեզվի պատմություն, ժամանակակից հայոց լեզու, ընդհանուր լեզվաբանություն առարկաները եւ մի շարք հատուկ դասընթացներ: Հայագիտական թեմաներով դասախոսություններ է կարդացել Բուլղարիայում (1967թ.) եւ ԱՄՆ-ում (1985թ.): Ղեկավարել է ասպիրանտների, նրա սաներից շատերը գիտության թեկնածուներ եւ դոկտորներ են: Վարել է ուսումնագիտական պաշտոններ: Եղել է համալսարանի հայոց լեզվի ամբիոնի վարիչ, բանասիրական ֆակուլտետի դեկան:

1955 թվականից մինչեւ վերջերս Հ. Բարսեղյանը ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեի գիտական քարտուղարն էր: 1977-1988թթ. ղեկավարել է ՀԽՍՀ բարձրագույն կրթության մինիստրության հայոց լեզվի ուսումնամեթոդական խորհրդի աշխատանքները:

1969թ. ընտրվել եւ մինչեւ 1972թ. աշխատել է որպես համալսարանի կուսկոմիտեի առաջին քարտուղար, եղել է Երեւանի քաղխորհրդի դեպուտատ:

1988թ. ավարտվեց նրա համահեղինակությամբ կազմված «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարանի» հինգհատորյակի հրատարակումը, որը մի քանի տասնյակ տարիների համառ, քրտնաջան, գիտական պրպտումների արդյունք էր: Այն ունի ոչ միայն գիտական մեծ նշանակություն, այլեւ նպաստում է մեր ազգային անվտանգության պահպանման շահերին, այն իրավացի կերպով բարձր գնահատվեց եւ արժանացավ հանրապետության նախագահի հատուկ մրցանակին, ինչպես նաեւ Թեքեյան մշակութային միության «Վ. Թեքեյան» մրցանակին: Ներկայումս պատրաստ է եւ հանձնված է տպագրության նույն բառարանների բարեփոխված եռահատորյակը Հ. Խ. Բարսեղյանի խմբագրությամբ եւ շուտով կդրվի ընթերցողների սեղանին:

Հ. Բարսեղյանը Ղարաբաղյան շարժման ակտիվ մասնակիցներից մեկն էր, նա իր ելույթներով ոգեւորում էր շարժման ակտիվ մասնակիցներին: Նա գտնում է, որ ազգային բոլոր ուժերն ու գործոնները պետք է ծառայեն

հայրենիքի բարգավաճմանը, նրա պետականության ամրապնդմանը: Խոսելով Արցախի հարցի արդարացի լուծման մասին, գտնում էր, որ այն հայը, ով կորցրել է հավատը եւ չի պայքարում հարցի արդարացի լուծումը մինչեւ վերջ հասցնելու համար, այլեւս հայ չէ:

Հ. Խ. Բարսեղյանը պարգեւատրվել է մի շարք մարտական եւ աշխատանքային շքանշաններով եւ մեդալներով: Դեռ վերջերս, Անկախության 19-րդ տարեդարձի առթիվ նա արժանացավ ՀՀ նախագահի շնորհած բարձրագույն՝ «Մեսրոպ Մաշտոց» շքանշանին:

Երեսունական թվականների վերջերին Մասսարայի ինքնագործ թատերական խումբը բեմադրում է «Լալվարի որսը» պիեսը, որի գլխավոր դերերը կատարում էին Երեւանի պետական համալսարանի ուսանող Հովհաննես Բարսեղյանը (Կարո) եւ հոգեկ, Երեւանի պիոներ պալատի երգչախմբի անդամ Սեդա Պողոսյանը (Ալվարդ): Բեմադրությունը շատ մեծ տպավորություն է թողնում գյուղական հանդիսատեսի վրա, նրանց կատարած երգերը երկար ժամանակ երգում էին գյուղի սիրահարված զույգերը. «Մխ ինձ գերեց Ալվարդը, ես ում պատմեմ իմ դարդը...»:

Այդ օրվանից սկսվեց Հովհաննեսի եւ Սեդայի ծանոթությունը, նրանք համակրեցին իրար եւ 1945թ., պատերազմի ավարտից հետո կայացավ նրանց ամուսնությունը: 65 տարի նրանք միասին վայելում են իրենց երեք որդիների, թոռնատիպ թոռների ու ծոռների պարգեւած երջանկությունը, իրար հետ սիրով ու համերաշխությամբ կիսում կյանքի դժվարությունները եւ ուրախությունները:

Բնությունը Հ. Բարսեղյանին օժտել է ոչ միայն մտավոր բարձր կարողություններով, այլ նաեւ երաժշտական նուրբ ձայնով: Նա իր սիրած հայկական ժողովրդական ու գուսանական երգերը կատարում է այնպես, ինչպես պրոֆեսիոնալները: Հաճախ, բարձր տրամադրության եւ ուրախ ընկերական սեղանների շուրջը, մտերիմ ընկերների պահանջով նա կատարում էր իր սիրած երգերից՝ Շերամի «Ամպերն ելան բլուր բլուր» երգը, կատարում էր մեծ վարպետությամբ՝ հիացմունք եւ հոգեկան բավականություն պարգեւելով լսողներին:

Օգտվելով պատեհ առիթից, վերսին շնորհավորում ենք ինքնուսնամյա իմաստունին եւ ասենք. շատ սիրելի Բարսեղյան, ցանկանում ենք Ձեզ քաջառողջություն, հայրենագիտությանը միտված բոլոր ծրագրերի հրաշալի ավարտ, եւ թող բլուր բլուր ամպերը հեռանան մեր ազգային սիմվոլ Մասիս սարի կատարից եւ Ձեր անձնական բազմաբովանդակ կյանքի երկնակամարից: Դուք կաք եւ կմնաք որպես իմացության հանրագիտարան, իսկական Համալսարան, վսեմաշուք հայագետ, որին ամեն անգամ հանդիպելիս պետք է խորին ակնածանքով խոնարհվել:

ԳԵՎՈՐԳ ՉԱՔԱՐՅԱՆ
ՀՀ վաստակավոր ուսուցիչ

ՌԵՎԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
լրագրող

«Ազգ»-ի խմբագրությունը խորը ակնածանքով ու երախտագիտությամբ միանում է շնորհավորանքներին:

Վրաստանի հերթական «լրտեսականը» երկու հայի ձերբակալությամբ

Վրաստանում ձերբակալվել է 20 մարդ՝ Ռուսաստանի օգտին լրտեսության մեղադրանքով: Ձերբակալվածների թվում կան նաեւ Վրաստանի՝ ազգությամբ հայ քաղաքացիներ:

Առաջին տեղեկությունը ձերբակալությունների մասին տարածել էին «Ռոյթեր» գործակալությունն ու մի քանի ռուսաստանյան լրատվամիջոցներ՝ վկայակոչելով վրացական ներքին գործերի նախարարության իրենց աղբյուրներին: Ըստ այդ տեղեկությունների, լրտեսության մեղադրանքով ձերբակալվածները, նախկին նմանատիպ իրավիճակներին ոչ նման, ոչ թե Ռուսաստանի կամ այլ երկրների, այլ Վրաստանի քաղաքացիներ են:

Գործակալությունների տեղեկատվության համաձայն, ձերբակալվածները մեղադրվում են լրտեսական ցանց ստեղծելու փորձերում եւ «իրենց աղբյուրներից տեղեկություններ ստանալու եւ ռուսաստանյան համապատասխան գերատեսչություններ այդ տեղեկությունները հասցնելու մեջ»:

Նշենք, որ դեռեւս 2006-ին վրացական իրականությունը հեղեղված էր լրտեսական պատմություններով, ձերբակալություններով ու Վրաստան-Ռուսաստան երկու երկրների փոխադարձ մեղադրանքներով: Այդպիսի «ձերբակալությունների» մասին վրացական իշխանությունների հայտարարությունները նախկինում հստակ ուղղվածություն ունեին՝ արդարացնել ռուսական ուղղությամբ ծրագրվող ռազմական գործողությունը կամ ամրապնդել «Ռուսաստանն ագրեսոր է» մոտեցումն աջխարհում:

Հետաքրքրական է, որ վրացական ընդդիմությունն, իր հերթին, այս ձերբակալությունները համարում է բեմականացում, հավաստիացնելով, թե դա արվում է ընդդիմության կողմից նոյեմբերին ծրագրված ակտիվության վրա ազդելու նպատակով:

Ամեն դեպքում, վրացական իշխանությունները ձերբակալությունների եւ դրանց հիմնավորումների մասին նախընտրում են լռություն պահպանել: Որեւէ կերպ այս տեղեկությունները ոչ հերքել, ոչ էլ հաստատել են վրացական ներքին գործերի նախարարությունից: Միակ արձագանքը վրաց ներքին գործերի նախարարությունից եղել է այն, որ ձերբակալությունների առնչությամբ որեւէ պաշտոնական հայտարարություն կարվի այս շաբաթ, ամենայն հավանականությամբ շաբաթավերջին, որոշ վրացական լրատվամիջոցների տեղեկություններով՝ նոյեմբերի 5-ին:

Վրաստանի արտգործնախարարությունն, իր հերթին, հայտարարել է, թե որեւէ տեղեկություն չունի լրտեսության մեղադրանքով ձերբակալությունների մասին՝ որպես հարցի հստակեցնում նշելով ներքին գործերի նախարարությունը: Սրա կողքին, Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովը դեռեւս նախորդ շաբաթավերջին էր հայտարարել, որ թեեւ ձերբակալությունները տեղի են ունեցել, սակայն ՌԴ արտգործնախարարությունը չունի մանրամասն տեղեկություն այդ ձերբակալությունների մասին: Որպես միակ տեղեկություն Լավրովը նշել էր ձերբակալվածներից մեկի՝ Վրաստանի քաղաքացիներ լինելու հանգամանքը:

Հետաքրքրական է, որ ձերբակալությունների հիմնական մասը կատարվել է Բաթումում, որտեղ եւ նախորդ շաբաթավերջին ձերբակալվել է նաեւ Աջարիայի հայերի միության նախկին նախագահ Արմեն Գեւորգյանը: Ձերբակալվածների թվում է Վրաստանի՝ ծագումով հայ եւս մեկ քաղաքացի՝ Ռուբեն Շիկոյանը: Ըստ «Ինտերֆեքսյուզ» կայքէջի, Վրաստանի «Ձավախք» շարժման անունից հայտարարվել է, թե Արմեն Գեւորգյանը եւ Ռուբեն Շիկոյանը եղել են շարժման մասնակիցներ, եւ նրանց ձերբակալությունը «հերթական ճնշումն է շարժման դեմ»: «Ձավախք» շարժման անունից խոսել է Ռուբեն Թորոսյանը: Վրացական լրատվամիջոցների մեջբերումներով, «Ձավախք» շարժման անունից Ռուբեն Թորոսյանը տեղեկացրել է, թե ձերբակալված անձինք 1998-ից շարժման անդամ են եւ ակտիվ մասնակցություն են ունեցել երիտասարդության խնդիրների լուծմանը:

Արմեն Գեւորգյանի անձը որեւէ հարցական չի առաջացնում, քանի որ նա Աջարիայում հայտնի գործարար է, եղել է նաեւ Աջարիայի հայերի միության նախագահը: Ռուբեն Շիկոյանը եւս աջարահայ գործարար է: Ձերբակալվածների փաստաբան Նանա Ցուլաձեն «Ինտերֆեքսյուզ»-ին հայտնել է, թե հայ գործարարներին ձերբակալել են Բաթումում, եւ առայժմ նրանց նկատմամբ սահմանվել է երկու ամսվա կալանք:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Բրազիլիայի առաջին կին նախագահը

Նա բոլորար կոմունիստի դուստր է

Երեկ գիշեր հայտնի դարձան կիրակի օրը Բրազիլիայում անցկացված նախագահական ընտրությունների արդյունքները: Քվեաթերթիկների 99,99 տոկոսի մշակումից հետո ակնհայտ դարձավ, որ ընտրություններում հաղթել է կառավարող Աշխատավորների կուսակցության ներկայացուցիչ Դիլմա Ռուսեֆը: Նա ստացել է բոլոր քվեների 56,05 տոկոսը եւ Բրազիլիայի պատմության մեջ առաջին կին նախագահն է:

Սան Պաուլուի նախկին նահանգապետ, Սոցիալ-դեմոկրատական կուսակցության թեկնածու Ժոզե Սերան ստացել է քվեների 43,95 տոկոսը:

Դիլմա Ռուսեֆը իր առաջին ելույթում հայտարարել է, որ ինքը շարունակելու է նախկին նախագահ Լուիս Ինասիու Լուլա ա Սիլվայի քաղաքական գիծը: Աղագա կառավարության գերակայություններից մեկը կլինի պայքարը չքավորության եւ սոցիալական անհավասարության դեմ: Պայքար կծավալվի նաեւ թմրադեղերի առեւտրի եւ քաղաքային հանցագործությունների դեմ, կոպաբոպանվի մամուլի եւ դավանանքի ազատությունը: Բրազիլիայում կապահովվի աննախադեպ տնտեսական վերելք: Այդ մասին հաղորդում է ՌԻԱ գործակալությունը:

Արտաքին քաղաքականության ասպարեզում կխորանա մերձեցումը դաշնակից երկրներ Ռուսաստանի, Հնդկաստանի եւ Չինաստանի հետ, Հարավային Ամերիկայում կամրապնդվեն Բրազիլիայի առաջատար դիրքերը, երկիրն ակտիվորեն կմասնակցի «Մեծ քսանյակի» աշխատանքներին:

Դիլմա Վանա Ռուսեֆը ծնվել է Բրազիլիա տարագրված բուլղար կոմունիստ Պետր Ռուսեֆի ընտանիքում: Ուսանողական տարիներին ակտիվորեն պայքարել է Բրազիլիայի զինվորական բռնապետության դեմ (1964-1988), ձերբակալվել է ընդհատակյա զինված դիմադրությանը մասնակցելու համար, 1970-1972 թթ. եղել է կալանքի տակ: 2005-ից Ռուսեֆը նախագահ դա Սիլվայի վարչակազմի ղեկավարն էր մինչեւ 2010-ի ընտրարշավի սկիզբը: Նրան անվանում են Բրազիլիայի կառավարության «երկաթյա տիկին»:

Հարավային Ամերիկայում Ռուսեֆը երկրորդ կին նախագահն է: Առաջինը Արգենտինայի նախագահ Քրիստինա Ֆեռնանդես Կիրշներն է, որն անցյալ շաբաթ այրիացավ ամուսնու՝ Արգենտինայի նախկին նախագահ Նեստոր Կիրշների մահից հետո:

Բաղդադում տասնյակ զոհեր կաթոլիկների տաճարում

«Քաղդեական համայնքը կհեռանա Իրաքից»

Բաղդադի կենտրոնում լույս երկուշաբթի գիշերը «Ալ Ղաիդայի» հետ կապված խմբերից մեկը ներխուժել է քաղդեական կաթոլիկ տաճար: Դա Իրաքում քրիստոնյաների դեմ ձեռնարկված ամենադաժան գրոհներից մեկն է եղել: Ահաբեկիչները պատանդ են վերցրել հավատացյալներին եւ Եգիպտոսի Ղոտի եկեղեցուն 48 ժամ են տվել «այդ երկրի վանքերում բանտարկված մահմեդական կանանց ազատ արձակելու համար»: Ներխուժման պահին տաճարում եղել է մոտ հարյուր մարդ:

Ոռյթեր գործակալությունը հաղորդում է, որ ոստիկանները փորձել են ազատագրել պատանդներին: Փոխհրաձգության ընթացքում սպանվել են 52 ոստիկան եւ հավատացյալ, վիրավորների թիվը 67 է: Այդ թվերը չեն ներառում սպանված ահաբեկիչներին:

Բաղդադի քաղդեական եպիսկոպոս Շլիմուն Վարդունին Ֆրանսուազ թղթակցին հայտնել է, որ ահաբեկիչները սպանել են տաճարի երկու սպասավորների եւ հրազենով վիրավորել են երրորդին: Քաղդեացի կաթոլիկների եպիսկոպոսական տեղապահ Պիոս Կաբան իր հերթին ցավ է արտահայտել տաճարում տեղի ունեցած «սպանդի» առնչությամբ: «Արդեն հստակ է, որ իմ համայնքի բոլոր անդամները հեռանալու են Իրաքից», հայտարարել է նա:

Վատիկանի խոսնակ Ֆեդերիկո Լոմբարդին նշել է, որ տաճարի միջադեպը «հստակում է Իրաքի քրիստոնյաների ծանր վիճակը»:

«Ֆիգարո» թերթը գրում է, որ Վատիկանում հոկտեմբերի 12-ին Մերձավոր Արեւելքին նվիրված եկեղեցական ժողովում Իրաքի Քիրքուք քաղաքի արքեպիսկոպոսը մտահոգություն է արտահայտել Իրաքից քրիստոնյաների «մահացու արտագաղթի» կապակցությամբ: Եկեղեցու վիճակագրական տվյալների համաձայն, Իրաքի բնակչության մեջ կաթոլիկների բաժինը 1980 թ. 2,89 տոկոսից (378 հազար) 2008-ին իջել է 0,94 տոկոսի (301 հազար):

Ճապոնիան բողոքում է Մեդվեդեւի Կուրիլներ կատարած այցի առնչությամբ

Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւը նոյեմբերի 1-ին աշխատանքային այց է կատարել Կունաշիր կղզի: Այս կապակցությամբ Ճապոնիայի արտգործնախարար Սեյգի Մաեխարան իր մոտ է կանչել Տոկիոյում ՌԴ դեսպան Միխայիլ Բելիին եւ բողոք է արտահայտել, հաղորդում է BBC-ն:

Ճապոնիայի վարչապետ Նաոտո Կանը իր հերթին հայտարարել է, որ Մեդվեդեւի գործողությունները «արժանի են ափսոսանքի»:

Մեդվեդեւը «վիճելի տարածքներ »այցելած ՌԴ առաջին ղեկավարն է: Կունաշիր կղզում նա հանդիպել է բնակիչների հետ եւ դիտել շինհրապարակները: BBC-ի թղթակիցը նշում է, որ Կունաշիր կղզում, ինչպես նաեւ Յուժնո-Սախալինսկում Մեդվեդեւի մամլո ասուլիսին արգելվել էր ճապոնական լրատվամիջոցների ներկայությունը:

Հատկանշական է, որ Կունաշիրում Մեդվեդեւը տեղաշարժվում է ճապոնական Nissan Patrol ավտոմեքենայով: Ասում են, այնտեղ ուրիշ մեքենաներ պարզապես չկան:

Ճապոնիայի արտգործնախարարի խոսքերով, Մեդվեդեւի Կուրիլներ կատարած այցը «վիրավորում է ճապոնացիների զգացմունքները», քանի որ այդ կղզիները «ճապոնական տարածք» են:

ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովը ի պատասխան հայտարարել է, որ ՌԴ նախագահը ազատ է այցելելու «իր երկրի ամեն մի տարածաշրջան»:

Ի դեպ, նոյեմբերի կեսերին Մեդվեդեւը Ճապոնիայում մասնակցելու է Ասիա-խաղաղօվկիանոսյան տնտեսական համագործակցության գագաթաժողովին:

Կուրիլյան 4 կղզիները Ճապոնիայի եւ Ռուսաստանի տարածքային վեճի առարկա են 2-րդ աշխարհամարտի ավարտից ի վեր, երբ դրանք անցան ԽՍՀՄ-ի վերահսկողության տակ:

BBC-ն հիշեցնում է, որ Եվրոխորհրդարանը ընդունեց հատուկ բանաձեւ, որտեղ Կուրիլներն անվանում էր «օկուպացված տարածք» եւ Ռուսաստանին կոչ էր անում դրանք վերադարձնել Ճապոնիային:

UNISTREAM համակարգի շրջանառությունը գերազանցել է 2,77 մլրդ դոլարը

UNISTREAM դրամական փոխանցումների միջազգային համակարգով իրականացված փոխանցումների ծավալը 2010-ի հունվար-սեպտեմբեր ամիսներին կազմել է 2,77 մլրդ դոլար, իսկ փոխանցումների քանակը՝ 4,45 մլն: Հայաստանում համակարգի շրջանառությունը հաշվետու ժամանակահատվածում գերազանցել է 400,3 մլն դոլարը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արձանագրելով 4%-ի աճ: Իրականացված փոխանցումների քանակը աճել է ավելի քան 5%-ով՝ կազմելով 537925:

Այսօր UNISTREAM համակարգը դրամական փոխանցումների ամենապահանջված համակարգերից մեկն է ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում: Այս տարվա սեպտեմբերին կայացած 4-րդ ռուսաստանյան բանկային համաժողովում UNISTREAM-ին է հանձնվել «Դրամական փոխանցումների ոլորտի առաջատար» դիպլոմը: UNISTREAM համակարգը Հայաստանում եւս դրամական փոխանցումների շուկայի առաջատարն է եւ ծավալով, եւ քանակով:

UNISTREAM համակարգով փոխանցումներն իրականացվում են «Յունիբանկ»-ի բոլոր 34 մասնաճյուղերում: Փոխանցումների սակագները հետեւյալն են՝

- մինչեւ 3 000 USD, EUR կամ 100 000 ռուսական ռուբլի գումարով դրամական փոխանցում կատարելու դեպքում դրամական փոխանցման սակագինը կազմում է 1%;
- եթե փոխանցման գումարը գերազանցում է 3 000 USD, EUR կամ 100 000 ռուսական ռուբլին, ապա փոխանցման սակագինը կազմում է 0,45%;
- եթե դրամական փոխանցումն իրականացվում է ՀՀ դրամով, ապա փոխանցման սակագինը կազմում է 0.35%:

Այս սակագներով դրամական փոխանցումներն իրականացվում են միայն «Յունիստրիմ» /Ռուսաստան/, «Յունիաստրում Բանկ» /Ռուսաստան/ եւ «Յունիբանկ» /Հայաստան/ բանկերի սպասարկման կետերում:

Վիետնամում կկառուցվի ատոմակայան

Ռուսաստանը եւ Վիետնամը ստորագրել են միջկառավարական համաձայնագիր էներգետիկայի բնագավառում համագործակցելու վերաբերյալ: Նախագահներ Դմիտրի Մեդվեդեւի եւ Նգուեն Մին Չիետի ներկայությամբ փաստաթուղթը ստորագրել են ՌԴ էներգետիկայի նախարար Սերգեյ Շմատկոն եւ Վիետնամի արդյունաբերության ու առեւտրի նախարար Վու Հյուն Հոանգը:

«Ռոսատոմի» ղեկավար Սերգեյ Կիրիենկոյի ստորագրությունը կրող համաձայնագրով նախատեսվում է Վիետնամում կառուցել առաջին ատոմակայանը՝ «Նինթուան-1»-ը: Մինչեւ 2020 թ. ռուսաստանցի մասնագետները կկառուցեն 1200 մեգավատանոց երկու էներգաբլոկ: ՌԻԱ գործակալության տվյալներով, ատոմակայանի շինարարությունը սկսվելու է 2012-ին:

Հասնել ինքնամաքրման

Թեթեյան թատերախումբը ներկայացրեց «Առնետաորսը» պիեսը

Հասնել ինքնամաքրման: Այսպիսի նպատակ էին իրենց առջեւ դրել «Առնետաորսը» ներկայացման հերոսները: Դրամատուրգ Պետեր Տուրինիի մեկ գործողությամբ համանուն պիեսը Պատանի հանդիսատեսի թատրոնի բեմում հոկտեմբերի 29-ին ու 31-ին ներկայացնում էր Թեթեյան թատերախումբը: Ամսի 29 ու 31-ը պրեմիերային օրեր էին: Ներկայացման բեմադրիչն **Սիդա Հովհաննիսյանն** է: Հայաստանի Թեթեյան մշակութային միության (ՀԹՄՄ) Թեթեյան թատերախմբի տնօրեն **Գայանե Մուրադյանը** տեղեկացրեց, որ թատերախումբը ստեղծվել է 2004 թվականին ու հաստատել է բեմադրել շատ հետաքրքրական ներկայացումներ՝ Հրանտ Մաթեւոսյանի «Աշնան արեւը», Շեքսպիրի «Վերջի սկիզբը», Պերճ Զեյթունցյանի «Մի՛ նայիր հայելուն» ստեղծագործությունները: Թատերախումբը նաեւ բեմադրել է ներկայացումներ պատանիների ու երեխաների համար: «Որեւէ գործ բեմադրելուց առաջ Թեթեյան թատերախումբը հրավիրում է դերասաններին ու բեմադրիչին, որոնք խաղում են աշխատանքային պայմանագրով», ասաց Գայանե Մուրադյանը: Ներկայացումներում խաղացել են սիրված ու ճանաչված դերասաններ, օրինակ «Աշնան արեւի» մեջ խաղացել է Վիոլետա Գեւորգյանը, «Վերջի սկիզբը» ներկայացման մեջ՝ Գուժ Մանուկյանը:

Թեթեյան թատերախմբին օգնում եւ ֆինանսապես աջակցում է մշակույթի նախարարությունը: Գայանե Մուրադյանը տեղեկացրեց, որ թատերախումբը մասնակցել է հայաստանյան թատերական փառատոների, բարեգործական ծրագրերով հանդես է եկել մանկատներում: «Առնետաորսի» բեմադրությանը թատերախումբը ձեռնամուխ է եղել այս տարի: Հերոսները երկու հոգի են՝ կին ու տղամարդ, որոնք մինչեւ վերջ մեկը մյուսի անունները չեն իմանում: Ոչ էլ հանդիսատեսն է իմանում նրանց անունները: Պիեսը կնոջ ու տղամարդու փոխհարաբերությունների մասին է, որի տակ որոշակի գաղափար է թաքնված: Միմյանց լրացնելով՝ հերոսները ձգտում են հասնել ինքնամաքրման: Դերասանուհի Անի Պետրոսյանը ներկայացնում էր կնոջ կերպարը: Հայ հանդիսատեսին նրա խաղն ու կերպարը բավականին անսովոր ու համարձակ էին թվում. դերասանուհին մարմնավորել էր անբարոյական մի կնոջ: Տղամարդը, որի դերակատարը Հովակ Գալոյանն էր, մեքենաների գերեզմանոցում՝ աշխարհից կտրված, աղբով ծածկված մի վայրում, ստեղծել էր իր աշխարհը, որտեղ նա ձգտում էր հասնել բացարձակ ազատության: Ոչ պիտանի մեքենաների կտորներից նա հավաքել էր իր մեքենան, որով պետք է թռչեր ու հասներ ինքնամաքրման: Հերոսը անբարոյական կնոջը բերում է մեքենաների գերեզմանոց, սկզբում միմյանց չեն հասկանում, բայց հետո աննկատորեն սկսում են համաձայնության գալ եւ ազատվելով ամեն մի նյութականից՝ հասնել ինքնամաքրման: «Վերջում հերոսուհու ներքին աշխարհն այնքան տգավորիչ է դառնում ինձ համար», **«Ազգի»** հետ զրույցում ասաց **Հովակ Գալոյանը:**

Բոլոր գործողությունները կատարվում են մեքենաների գերեզմանոցում: **Անի Պետրոսյանի** խոսքով՝ պիեսն անդրադառնում է այնպիսի հարցերի , որոնց մասին հասարակությունը, տվյալ դեպքում նաեւ հանդիսատեսը խուսափում են խոսել:

Ինքնամաքրումից հետո հերոսների միջեւ սեր է ծնվում: Նրանք հնարավորություն ունեին երջանիկ լինելու, սակայն կյանքի ճահիճը նորից ձգում է նրանց ներքեւ, բայց այս անգամ ամենադաժան ձեւով. հերոսներին սպանում են... առնետները: Երկու կրակոց, եւ հերոսներն այլեւս չկան:

Խոսելով ներկայացման մասին, վաստակավոր ռեժիսոր **Վահե Շահվերդյանը** նշեց, որ աշխատանքը կարելի է հաջողված համարել. «Վերջում ծնվեց սեր, սակայն հերոսները դատապարտվեցին առներերի հետ Երիտասարդական էքսպերիմենտալ փոսի թատրոնում, որն այլեւս գոյություն չունի: «Ժամանակի պահանջից ելնելով՝ ստացվել են տարբեր ներկայացումներ», հավելեց բեմադրիչը: Սիդա Հովհաննիսյանը նաեւ դասախոսում է Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանում կուլտուրայի ֆակուլտետի հեռուստառեժիսուրայի, օպերատորության եւ գեղարվեստական լուսանկարչության ամբիոնի վարիչն է: Ներկայացման նկարչական ձեւավորումը կատարել է Նարեկ Մարտիրոսյանը, երաժշտական ձեւավորումը՝ Ավետիս Պետրոսյանը, խորեոգրաֆն է Վլադիմիր Շահվերդյանը:

Գայանե Մուրադյանը տեղեկացրեց, որ ներկայացումները շարունակական են լինելու: Այստեղ տեղին է նորից մեջբերել Վահե Շահվերդյանի խոսքերը. «Ամենակարեւորն այն է, որ անկախ բոլոր ծանր պայմաններից, արվեստագետը չի դադարեցնում իր գործը: Երբ սպասվում է, որ արվեստագետների աշխատավարձը բարձրանալու է ընդամենը 15 տոկոսով, արվեստագետներն այնուամենայնիվ չեն վիճաբանվում եւ շարունակում են արարել»:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐ

«Իմ երաժշտությունը համամարդկային է»

Տավուշի չքնաղ բնօրրանում ծնված Նորայր Քարաշյանը մանկուց սիրել է հայկական ժողովրդական, գուսանական ու աշուղական երգը: 11-ամյա Նորայրի հետաքրքրությունը հայկական նվագարանների նկատմամբ նկատել է հայրը՝ Գրիգոր Քարաշյանը, եւ մի աշնանային պայծառ օր որդուն տարել է երաժշտական գործիքներ պատրաստող տավուշցի հայտնի վարպետ Ռուբեն Ռուշանյանի մոտ: Դեռահասի տղան ժամերով լսել է վարպետի հետաքրքրական պատմությունները հայկական նվագարանների մասին ու այդ օրվանից ձեռքից բաց չի թողնում սրինգը, ջվին, բլուլը, պկուն: Սերը հայկական անաղարտ երաժշտության հանդեպ նրան տարավ Առնո Բաբաջանյանի անվան երաժշտական ուսումնարան, որտեղ սովորեց դուդուկի բաժնում եւ որոշեց հետզհետե անհետացող հայկական նվագարանների համար ստեղծել երաժշտություն, տարածել դրանք, որպեսզի երիտասարդ սերունդը կարվի անաղարտ ու մնայուն երաժշտությանը, այլ ոչ թե անցողիկ մեղեդիներին: Բլուլը Նորայրի կյանքում մեծ դեր է խաղացել, որի շնորհիվ երիտասարդ երգահանը կարողացել է տարբեր ձեւով մեկնաբանել հայկական ֆոլկլորային, գուսանական, աշուղական երաժշտությունը:

«Ազգի» հետ զրույցում **Նորայր Քարաշյանը** նշեց. «Ես երաժշտության բնագավառում մասնագիտացած եմ, եւ իմ բոլոր ջանքերը ներդնում եմ՝ պահպանելու մեր ավանդական, դարերից մեզ հասած մասունքներն անաղարտորեն ներկայացնելով ունկնդրին»: Նորայրը նվագում է տարբեր խմբերի հետ, բայց հիմնականում հանդես է գալիս «Կատուներ» հայտնի խմբի հետ:

Երեկ Թումանյան 40 հաստեւում գտնվող «The Club» ակումբի մուտքը բազմամարդ էր: Հանկարծ լսվեց ազգային դհոլ-զուռնայի զիլ ձայնը եւ Թումանյան փողոցը լցվեց ազգագրական երաժշտության հնչյուններով: Մեզանում առաջին անգամ նման կերպ էին սկսում ձայնասկավառակի շնորհանդեսը: Ազգային տարազներով երաժիշտներին Նորայր Քարաշյանն իր զուռնայի զիլ ձայնով ուղեկցեց ակումբ, որտեղ էլ կայացավ միջոցառումը:

Մեկ ժամից ավելի տեւողությամբ 12 ստեղծագործություն է զետեղված Նորայրի «Ծառասան» անդրանիկ ձայնասկավառակում , որից 4-ը՝ ֆոլկլորային գործեր են, 8-ը՝ հեղինակային: Ձայնասկավառակը Նորայրը նվիրում է հոր՝ Գրիգոր Քարաշյանի հիշատակին: Ստեղծագործողի համար կարեւորն իր աշխատանքի գնահատականն է, որին արժանացավ երեկ Նորայր Քարաշյանը՝ Ջիվանու, Կոմիտասի, Արամ Խաչատրյանի երաժշտությունների նվիրյալը, ազգայինին անմոռաց հետեւորդը: Նշենք, որ ձայնասկավառակի թողարկմանը մեծ նպաստ են ունեցել Սանկտ Պետերբուրգի հայկական համայնքը՝ ի դեմս Կարեն Մկրտչյանի, Նորայրի հորեղբոր տղաները՝ Ստեփան, Արմեն եւ Դավիթ Քարաշյանները, գործընկերներն ու երկրպագուները, որոնց հատուկ շնորհակալություն հայտնեց Նորայրն ու նվիրեց ձայնասկավառակի առաջին օրինակներն իր ստորագրությամբ:

ՄԱԲԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Կրթական ծրագրեր 0-101 տարեկանների համար

Սփյուռքահայ ազգային-կրթական գործի լավագույն կազմակերպիչներից մեկի՝ **Սիլվա Լ. Տեր-Ստեփանյանի** նվիրումը հայ դպրությանը փաստվում է նրա անխոչ գործունեությամբ, որի արդյունքում սփյուռքի մեր կրթօջախները համալրվում են ոչ միայն բազմաբովանդակ դասագրքերով, մեթոդական ձեռնարկներով, բառարաններով, նաեւ օժանդակ-լրացուցիչ նյութերով. դրանք պատկերազարդ գրքույկներ, պարբերաթերթեր, խաղ-գրքույկներ, երաժշտական խաստալիկներ, տեսաստալիկներ են եւ այլն՝ հաստատագրված ինչպես տարբեր տարիքի երեխաներին ու պատանիներին, նաեւ ուսուցիչներին: Նկատի են առնված ե՛ւ տարիքային առանձնահատկությունները, ե՛ւ սփյուռքահայ երեխայի միջավայրային դժվարությունները (ոչ հայախոս ընտանիքների): Գիտելիքի հաղորդման մեթոդի հիմքում ընկած է բնականաբար ասիճանական անցումները պարզից բարդին, նյութերի՝ ոչ միայն մատչելի, այլեւ պատկերավոր ներկայացումով:

Սիլվա Տեր-Ստեփանյանի կրթական ծրագիրը՝ մանրակրկիտ աշխատասիրված ուսուցման ամբողջական համակարգ է, որն ընդգրկում է մանկապարտեզային (3-5)՝ «Բողբոջ», «Կոկոն», «Ծաղիկ», նախակրթարանային հատակները եւ ավելի բարձր՝ Ձ եւ Է դասարանները: Արա-Մարալ դասագրքերի շարքը եւ ուսուցման օժանդակ նյութերը ներառում են գիտելիքի փոխանցման ամենատարբեր մակարդակներ եւ միջոցներ: Դասագրքերը տարբաժանվում են ընթերցանության, խոսելավարժության, քերականության, գրականության, աշխարհագրության, հայոց պատմության, կրոնի, ոտանավորների, թատերգության, ձեռարվեստի եւ այլն: Ուսուցման օժանդակ նյութերը ուղեցույցներ են, որոնք դյուրացնում են ուսուցչի գործը՝ մեկնաբանական-բացատրական տեքստերով եւ լրացուցիչ տեղեկություններով: Մեթոդական ձեռնարկներում տրված հանձնարարականները դասագրքերում ընդգրկված նյութերի ժամաբաշխումներին եւ չափանակին են նաեւ վերաբերում: Հաշվի առնելով լեզվական դժվարությունը, հայերենին՝ աշակերտի երբեմն ամբողջովին անհաղորդ լինելը, յուրաքանչյուր թեմայի համար սահմանված է որոշակի չափս (օրինակ՝ 8-ական տողով): Դասընթացները հարստացնում եւ հետաքրքրական են դարձնում համապատասխան թեմաներով կազմված երաժշտական եւ այլ բնույթի խաստալիկները, ուսուցողական խաղերը, ժամանցային եւ խաչբառեր գունավորելու գրքույկները, զանազան պարբերաթերթերը եւ այլն:

Նախադպրոցական հատակի փոքրիկներին հատկացված են ընդհանուր զարգացմանն ուղղված մեթոդներ՝ գունավոր պատկերազարդ դասագրքերով: Հայոց այբուբենի տառերի առաջին ծանոթացումը կատարվում է համարժեք հնչյունի, համապատասխան բառերի արտաբերումով, տառերը գունավորելով, երգերի, խաղերի, հայախոս եւ ոչ հայախոս հայերի համար նախատեսված բառարաններով, երեխայի կրթության դպրոցական մակարդակները նախապատրաստող այլ միջոցներով:

Սիլվա Տեր-Ստեփանյանի հեղինակած դասագրքերը, մեթոդական ուղեցույցներն ու մնացած ձեռնարկները գործածվում են Միացյալ Նահանգների Արեւելյան թեմին կից գործող Խրիմյան ճեմարանում (Նյու Ջերսի), ինչպես նաեւ հայկական ամենօրյա այլ կրթարաններում: Նրա ուսուցման մեթոդի հիմքում ընկած են ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերությունների անկաշկանդ անմիջականությունը, տվյալ դասաժամի սահմաններում գիտելիքի մատչելի փոխանցում ուսուցչի կողմից այնպես, որ աշակերտը դպրոցից տուն վերադառնա դասը սովորած: Նա մերժում է միակողմանի, վարժարանային «քարոզի» մեթոդը՝ առավելությունը տալով ուսուցման անհատականացված ձեւերին:

Հայ դպրոցների կրթական ծրագիրը նա հատկացրել է 0-101 տարեկաններին, ինչը եւս ուսուցման մեթոդի բաց, մատչելի, համակողմանի բնույթի վկայություն է:

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում մեկօրյա, ամառային ութնօրյա եւ լրացուցիչ դասընթացների հեղինակային բազմաբովանդակ ծրագրերը, որոնք ամենատարբեր բնույթի են՝ հայ ժողովրդի պատմությանը, մշակույթին, եկեղեցուն, կրոնին, նաեւ ձեռարվեստին, բարոյագիտությանը, կենցաղավարությանը վերաբերող: Ուշադրության են արժանի ազգային խորհրդանիշների ամենաաներեւակայելի ձեւերով նրա ստեղծած բազմաթիվ հուշանվերներն ու բացիկները, էջանիշները եւ այլ առարկաներ:

Մ. Ք.

ԱԶԳ Մարզական

Ճակատագրական պարտություն

Սամվել Տեր-Սահակյանը բավարարվեց արծաթե մեդալով

Հունասանում ավարտվեց շախմատի աշխարհի պատանեկան առաջնությունը, որի պարգեւներն էին վիճարկում տարիքային 6 խմբերում հանդես եկած պատանի շախմատիստներն ու շախմատիստուհիները: Հայաստանի 19 պատվիրակներից բոլորից հաջող հանդես եկավ վանաձորցի գրոսմայստեր Սամվել Տեր-Սահակյանը, որը մեկ ամիս առաջ դարձել էր մինչեւ 18 տարեկանների Եվրոպայի փոխչեմպիոն: Հունասանում էլ Սամվելը հիանալի ելույթ ունեցավ եւ շատ մոտ էր աշխարհի չեմպիոնի տիտղոսի նվաճմանը, սակայն ցավոք ավարտական տուրում կրած միակ պարտությունը ճակատագրական եղավ:

10-րդ տուրում Սամվել Տեր-Սահակյանը սեւերով հաղթելով Քրիստիան Կրուզին, վաստակեց 8,5 միավոր եւ եւս մեկ քայլ կատարեց չեմպիոնական բարձունքը նվաճելու ճանապարհին: Վերջին տուրից առաջ Սամվելին միավորներով հավասարվեց ամերիկացի Սթիվեն Զիերկը՝ պարտության մատնելով իսպանացի Անգել Արիբաս Լոպեսին: Այնպես որ չեմպիոնի հարցը վճռվելու էր վերջին տուրում:

11-րդ տուրում Սամվելը սպիտակներով մրցում էր ռուսասանցի Ալեքսանդր Շիմանովի հետ, իսկ Զիերկի մրցակիցը սեւերով խաղացող ադրբեջանցի գրոսմայստեր Վասիֆ Դուրարբեյլին էր: Ցավոք, հայ շախմատիստը զիջեց մրցակցին՝ կրելով մրցաշարում միակ պարտությունը, որն, ինչպես պարզվեց, ոսկու արժեք ունեցավ: Չեմպիոնի տիտղոսը նվաճեց Սթիվեն Զիերկը՝ հաղթելով Դուրարբեյլիին (չի բացառվում, որ ադրբեջանցին միտումնավոր պարտված լինի): Այսպիսով, Զիերկը վաստակեց 9,5 միավոր, իսկ Սամվել Տեր-Սահակյանը 8,5 միավորով սպիտված էր

բավարարվել աշխարհի փոխչեմպիոնի տիտղոսով: Բրոնզե մեդալը բաժին հասավ շվեդ Նիլս Գրանդելիուսին, որը լրացուցիչ գործակիցներով առաջ անցավ իր հետ 8 միավոր ունեցող Անգել Արիբաս Լոպեսից եւ Ալեքսանդր Շիմանովից: Գրանդելիուսը վերջին տուրում հաշտություն կնքեց Մարսել Կանարեկի հետ:

Հայ շախմատիստներից մրցանակային տեղի էր հավակնում նաեւ մինչեւ 12 տարեկանների մրցաշարի մասնակից Մանուել Պետրոսյանը: Սակայն 10-րդ տուրում մրցաշարի աղագա հաղթող, չինացի Յի Վեյից կրած պարտությունը Մանուելին զրկեց մեդալ նվաճելու հնարավորությունից: 11-րդ տուրում նա հաղթեց Վլադիմիր Վեսոչկոյին եւ 8 միավորով զբաղեցրեց 4-րդ հորիզոնականը: Չեմպիոնի տիտղոսը նվաճած Յի Վեյը ավարտական տուրում էլ հաղթելով Դիոթյան Ղոշին, վաստակեց 9,5 միավոր: Արծաթե մեդալը նվաճեց 9 միավոր վաստակած ամերիկացի Կայդեն Տրոֆը, բրոնզե մրցանակակիր դարձավ լեհ Կրժիժտոֆ Դուդան (8,5 միավոր):

Հայաստանի մյուս պատվիրակների ցուցանիշներն այսպիսին են. Արմեն Բարսեղյան՝ 7,5 (13-րդ տեղ, մինչեւ 8 տարեկաններ), Արամ Հակոբյան՝ 6,5 (33-րդ տեղ, 10 տ.), Արթուր Հողմրցյան՝ 6,5 (42-րդ, 10 տ.), Հրանտ Ալեքսանյան՝ 6,5 (44-րդ, 12տ.), Գոռ Ալեքսանյան՝ 6 (53-րդ, 12 տ.), Միքայել Մկրտչյան՝ 5,5 (73-րդ, 12 տ.), Կարեն Կարապետյան՝ 4,5 (110-րդ, 12 տ.), Տիգրան Հարությունյան՝ 7 (18-րդ, 14 տ.), Վլադիմիր Կանջարյան՝ 5,5 (62-րդ, 14 տ.), Հովհաննես Գաբուզյան՝ 6,5 (27-րդ, 16 տ.), Գրիգոր Դիլանյան՝ 6,5 (26-րդ, 18 տ.), Անի Իվանյան՝ 5,5 (52-րդ, 10 տ.), Սիրանուշ Ղուկասյան՝ 6 (41-րդ, 12 տ.), Հասմիկ Շահբազյան՝ 5 (75-րդ, 12 տ.), Սուսաննա Գաբոյան՝ 6,5 (19-րդ, 14 տ.) Մարիա Գեւորգյան՝ 7,5 (12-րդ, 16 տ.), Շուշան Սարգսյան՝ 5 (44-րդ, 18 տ.):

Ներկայացնենք տարիքային տարբեր խմբերում չեմպիոններին: Պատանիներ. Ազար Գադիմբայլի (Ադրբեջան)՝ 9,5 (8 տ.), Յասոն Կաո (Կանադա)՝ 9 (10 տ.), Ազար Իզաթ (Ադրբեջան)՝ 9 (14 տ.), Քամիլ Դրագուն (Լեհաստան)՝ 8,5 (16 տ.):

Աղջիկներ. Յունշան Լի (Չինաստան)՝ 10,5 (8 տ.), Դավադեմբերել Նոմինեռդենե (Մոնղոլիա)՝ 9 (10 տ.), Յուլիա Օսմակ (Ուկրաինա)՝ 9 (12 տ.), Դինարա Սադվակասովա (Ղազախստան)՝ 9 (14 տ.), Նաստասիա Զյազուլկինա (Բելառուս)՝ 8,5 (16 տ.), Նիզամի Կազիմովա (Ադրբեջան)՝ 9 (18 տ.):

Դրամատիկ վերջաբան

Ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության 26-րդ տուրի «Փյունիկ»-«Բանանց» հանդիպումը դրամատիկ վերջաբան ունեցավ: Ավելացված ժամանակի վերջին վայրկյաններին «Փյունիկը» Կառլեն Մկրտչյանի խփած միակ գոլի շնորհիվ կորզեց հաղթանակը եւ չեմպիոնի տիտղոսը նվաճելու ծանրակշիռ հայտ ներկայացրեց:

Ընթացիկ մրցաշրջանի ամենավճռորոշ հանդիպումը չափազանց համառ բնույթ կրեց: Երկու թիմերն էլ ձգտում էին այս խաղում վճռել չեմպիոնության հարցը: Թեեւ «Բանանցին» բավարարում էր նաեւ ոչ-ոքի արդյունքը, սակայն Ստեփան Կուզմանոսկու սաներն ավելի ակտիվ ու հարձակողական խաղ ցուցադրեցին: Նրանք ունեցան դարպասը գրավելու չորս իրական պահ, սակայն Արսեն Բալաբեկյանը, Դենիսն Օրտեգան եւ Բետոն չիրացրին դրանցից եւ ոչ մեկը: «Փյունիկը» 3 վտանգավոր պահ ստեղծեց: Առաջին դրվագում Արսակ Եդիգարյանի հուժկու հարվածը ցնցեց դարպասի հորիզոնական ձողը, Կառլեն Մկրտչյանի հարվածը հետ մղեց Ստեփան Ղազարյանը, իսկ Հովհաննես Գոհարյանը նոպասավոր դիրքից վրիպեց:

Խաղի կազմակերպման առումով «Բանանցը» գերազանցեց «Փյունիկին» եւ ավելի մոտ էր հաջողությանը: Սակայն մարզական բախտը ժպտաց «Փյունիկին»: Այդ անչափ կարեւոր հաղթանակից հետո «Փյունիկին» վերջապես հաջողվեց շրջանցել «Բանանցին» ու գլխավորել աղյուսակը: Առաջնության մնացած երկու խաղերում «Փյունիկը» հյուրընկալելու է «Գանձասարին» եւ «Կիլիկիային», իսկ «Բանանցը» մրցելու է «Կիլիկիայի» եւ «Շիրակի» հետ: Դժվար է պատկերացնել, որ «Փյունիկը» ձեռքից բաց կթողնի 10-րդ անգամ անընդմեջ երկրի չեմպիոն հռչակվելու հիանալի հնարավորությունը:

Խաղից հետո կայացած մամուլի ասուլիսում թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքն արտահայտեցին:

Վարդան Մինասյան («Փյունիկ»)-Խաղի լարվածությունը շատ մեծ էր, քանի որ մեզ միայն հաղթանակ էր անհրաժեշտ: Դրա պատճառով էլ այսօր «Փյունիկի» խաղն այն չէր: Լավ էր, որ վերջին 20 րոպեներին տղաները բնավորություն դրսեւորեցին, ակտիվ խաղացին ու անչափ կարեւոր հաղթանակ տոնեցին: Սակայն չեմ գտնում, թե չեմպիոնական մրցավազքն ավարտվեց: Եթե այդպես մտածենք, մնացած 2 խաղերում հաջողության չենք հասնի ու չեմպիոն չենք դառնա: Սա դեռ գործի 40 տոկոսն էր:

Ստեփան Կուզմանոսկի («Բանանց»)-Իհարկե, շատ ցավալի պարտություն կրեցինք: Շնորհավորում եմ 2 թիմերին էլ այսօրվա լավ խաղի համար: Չգիտեմ, խաղի ժամանակը լրացել էր, թե ոչ, սակայն «Փյունիկն» օգտագործեց իր վերջին հնարավորությունը՝ օգտվելով մեր ֆուտբոլիստների զգոնության թուլացումից: Շատ ափսոս, որ կարծես ողջ մրցաշրջանի աշխատանքը ջուրը թափվեց: Իհարկե, կարեւոր է, որ մեր ֆուտբոլիստներն իրենց ողջ ուժերը ներդրեցին հաջողության հասնելու համար, գրագետ գործեցին, հարձակողական ֆուտբոլ ցուցադրեցին, սակայն չկարողացան իրացնել գոլային պահերը: Ընդհանուր առմամբ առաջնության 2 լավագույն թիմերի մասնակցությամբ ագրեսիվ խաղ ստացվեց:

Երբեմ մրցավարի գործողությունները չեմ մեկնաբանել, սակայն չգիտեմ, թե ինչու նա Բեսոյին եւ Օրտեգային դեղին քարտ ցույց տվեց՝ զրկելով առաջնության վերջին 2 հանդիպումների մասնակցությունից: Ընդհանուր առմամբ գոհ եմ «Բանանցում» ստեղծված պայմաններից, կատարված աշխատանքից: Շատ կցանկանայի շարունակել աշխատանքը, պահպանել այս կազմը եւ սխալները շտկելով, մյուս տարի կրկին պայքար մղել չեմպիոնի տիտղոսի համար: Պետք է գտնել այն բանաձեւը, որի շնորհիվ հնարավոր կլինի չեմպիոն դառնալ:

Մյուս խաղերում հաջողությունն ուղեկցեց հյուրերին: «Միկան» Կապանում Նարեկ Բեգլարյանի միակ գոլի շնորհիվ հաղթեց «Գանձասարին»: «Ուլիսը» «Հրազդանում» 3 անպատասխան գնդակ խփեց «Կիլիկիայի» դարպասը: 2 գոլ խփեց Վալերի Ալեքսանյանը, մեկ անգամ աչքի ընկավ Արսակ Անդրիկյանը: Իջեւանում «Իմպուլսը» կամային հաղթանակ տոնեց «Շիրակի» նկատմամբ: Հաշիվը 2-րդ խաղակեսի սկզբին բացեց գյումրեցի Մկրտիչ Նալբանդյանը, սակայն հետագայում Արթուր Պետրոսյանն ու Զավեն Բադոյանը կամային հաղթանակ պարգեւեցին դիլիջանցիներին:

Մրցաշարային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Փյունիկ	26	18	5	3	69-22	59
2. Բանանց	26	18	4	4	55-23	58
3. Ուլիս	26	16	3	7	40-20	51
4. Միկա	26	14	4	8	44-26	46
5. Իմպուլս	26	9	7	10	27-41	34
6. Գանձասար	26	7	3	16	23-42	24
7. Կիլիկիա	26	4	3	19	19-58	15
8. Շիրակ	26	2	3	21	20-65	9

Ռմբարկուներ

Գեւորգ Ղազարյան	«Փյունիկ»	15
Մարկոս Պիզելի	«Փյունիկ»	14
Էդուարդո Դոս Սանթոս	«Բանանց»	11
Էդնեյ	«Միկա»	10

ՀՈԲԵԼՅԱՆ

Հայկական ընտանիքի քայլող լեգենդը 75 տարեկան է

Այսօր բոլորեց աշխարհահռչակ մարզիկ, հայոց մարզական դաստիարակության երախտավոր, հայկական ընտանիքի քայլող լեգենդի՝ Նորիկ Թագվորի Մուշեղյանի ծննդյան 75-ամյակը: Լեգենդ, քանզի 265-րդ օլիմպիական խաղերի (281 թ.) չեմպիոն Տոդաս 3-րդ թագավորից հետո մոտ 17 դար անց երկիր երկրի համար պայքարի «գորգի» վրա է՝ իր հաստատակամությամբ, իր օրինակով, իր ինքնատիպությամբ, անդադրում շարունակում է իր փոքրն ու ճշմարիտ հայրենասիրությունը հաղորդել երիտասարդությանը, գործընկերներին:

Նորայր Մուշեղյանը իր հանրահայտ մարզական սխրանքների օրինակի ուժով նախանշեց ընտանիքի ազգային դպրոցի հետագա ուղին ու կերպը: Որպես նրա կայուն մրցելույթների եւ տպավորիչ հաղթանակների գնահատանք, եւ միաժամանակ, այդ մարզաձեւի զարգացման երաշխիք ու վստահություն, խորհրդային Հայաստանի ղեկավարությունը Երեւանում հիմնեց իր տեսակի մեջ աշխարհում առաջին մանկապատանեկան ընտանիքի մարզադպրոցը: Այն հայտնի է որպես Մուշեղյանի դպրոց: Կարծում ենք, որ ժողովրդի կնքած անունը պատշաճապես կվավերացնի անկախ Հայաստանի կառավարությունը, մանավանդ որ դրա իրավունքը հիմնադիրն արդեն նվաճել է իր ղեկավարած մարմնակրթության դարբնոցում աճած ու մեծ ճանաչում ստացած տասնյակ հեղինակավոր ընտանիքներով: Մե՛ր մեծերով, մե՛ր լավագույն ավանդույթներով դաստիարակությունը մեր ազգային առաջընթացի եւ կայունության անհերքելի գրավականն է:

Արեւշատություն քեզ, մեծ վարպետ, մտավորական ու մանկավարժ, արժանապատիվ քաղաքացի ու նվիրյալ հայորդի Նորայր Մուշեղյան:

ՖՈՏՈԼՈՒՐ

Հայկական սպորտի երախտավորներ Նորայր Մուշեղյանը (ձախից) եւ Վլադիմիր Ենգիբարյանը

Լավագույնը Զավեն Անդրեասյանի արդյունքն է

Սանկտ Պետերբուրգում ընթացող Չիգորինի շախմատի հուշամրցաշարին մասնակցում են նաեւ Հայաստանի ներկայացուցիչները: Նախ անցկացվեց արագ շախմատի մրցաշար 9 տուրով, որին մասնակցեցին հայաստանցի 5 շախմատիստներ: Լավագույն արդյունքի հասան գրոսմայստերներ Զավեն Անդրեասյանն ու Հրանտ Մելքումյանը, որոնք 9 հնարավորից վաստակեցին 7-ական միավոր: Ընդ որում Անդրեասյանը մրցաշարն անցկացրեց առանց պարտության: Նա հաղթանակներ տոնեց Վլադիմիր Եզերսկու, Եվգենի Կալեգինի, Իգոր Գլեկի, Անդրեյ Ստուկոպինի, Դենիս Խիսմատուլինի նկատմամբ, հաշտություն կնքեց Էլդար Հասանովի, Եվգենի Վորոբյովի, Սերգեյ Յուդինի եւ Եվգենի Ալեքսեեւի հետ: Անդրեասյանը գրավեց 2-րդ տեղը, իսկ Մելքումյանը, որը տոնեց 7 հաղթանակ, 2-ում պարտվեց, լրացուցիչ գործակիցներով զբաղեցրեց 6-րդ տեղը: Հաղթող ճանաչվեց 7 միավոր ունեցող Սերգեյ Յուդինը, որը մրցակիցներին գերազանցեց լրացուցիչ գործակիցների շնորհիվ:

Հայաստանի մյուս շախմատիստներից Սուրեն Պողոսյանը 5 միավորով գրավեց 64-րդ տեղը: 4 միավոր վաստակած Դավիթ Պետրոսյանը 93-րդ տեղը զբաղեցրեց: 2,5 միավորով 143-րդ տեղում հանգրվանեց Վլադիմիր Պողոսյանը:

Այժմ ընթացքի մեջ է Չիգորինի հուշամրցաշարը դասական շախմատից: Հայաստանն այդ մրցաշարում ներկայացնում են 8 շախմատիստներ: 4 տուրից հետո մեր շախմատիստներից լավագույն արդյունքն ունի Զավեն Անդրեասյանը, որը վաստակել է 3,5 միավոր: Նա մեկնարկում 3 անընդմեջ հաղթանակ է տոնել՝ հաջորդաբար պարտության մատնելով Իլյա Վալովին, Անդրեյ Կիրոշային եւ Ստանիսլավ Բոգդանովիչին: 4-րդ տուրում Զավենի հաղթարշավը կանգնեցրեց Իլյա Սմիրինը: Անդրեասյանը մի խումբ շախմատիստների հետ բաժանում է 3-20-րդ տեղերը: Առաջատարներն են 4-ական միավոր վաստակած ռուսասանցի Բորիս Սավչենկոն եւ բոսնիացի Իվան Սոկոլովը:

Կարեն Գրիգորյանը, Վլադիմիր Պողոսյանը եւ Հրանտ Մելքումյանը վաստակել են 3-ական միավոր: 2,5 միավոր ունի Դավիթ Պետրոսյանը, 2՝ Սուրեն Պողոսյանը, 1՝ Աղասի Ինանցը: Առայժմ միավոր չի վաստակել Վիկտորյա Բաղդասարյանը:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Օրվա հետքերով

Ի՞նչ կատարվեց Թեհրանում

Թեհրանում արդեն 17 տարի անցկացվող մամուլի եւ լրատվական գործակալությունների միջազգային ցուցահանդեսի նպատակն է ընդգրկել բազմաթիվ երկրների ներկայացուցիչների՝ հնարավորություն ընձեռելով մի քանի օրվա ընթացքում ոչ միայն ներկայացնելու իրենց երկիրը, այլեւ ծանոթանալու հարեւան երկրների մշակույթին ու պատմությանը: Ընդունված կարգի համաձայն ցուցահանդեսում պետք է արգելվի քարոզչությունը, գնահատվի ազատ խոսքն ու փորձ արվի լրատվամիջոցների եւ լրագրողների ջանքերով քանդելու այն պատնեշները, որոնք քաղաքական գործիչներն ու դիվանագետները չեն կարողանում անել:

Ցավոք, ցուցահանդեսին ներկայացած ադրբեջանական պատվիրակության անդամները չհարգեցին ազատ խոսքի միակ պաշտպան մամուլին նվիրված ցուցահանդեսը, չհարգեցին սկզբունքները, որոնցով պետք է առաջնորդվեն լրագրողներն ու բացահայտ հակահայ քաղաքականություն վարելուն զուգահեռ թույլ տվեցին խուլիգանական արարքներ ու ագրեսիվ պահվածք: Մասնավորապես ցուցահանդեսի բացման օրը ադրբեջանական «ԱՊԱ» գործակալության լրագրող Սուլեյման Ֆարզալիեւը իրանական կողմի ներկայությամբ մտավ հայկական տաղավար, պոկեց պատին փակցված ՀՀ եւ ԼՂՀ քարտեզները. «Ինչո՞ւ եք կանգնել, Հայաստանի ու Ղարաբաղի հարցը պետք է հենց այս ձեւով լուծվի», բղավեց հոգեպես անհավասարակշիռ ադրբեջանցին ու փորձեց պատռել քարտեզը: Եթե կազմակերպիչները, ադրբեջանցի եւ թուրք լրագրողները, որ եկել էին իրենց եղբայրիկներին պաշտպանելու, չմիջամտեին, Սուլեյմանը կհարվածեր նաեւ հայկական պատվիրակության անդամներ՝ «Ազգ» օրաթերթի եւ PanArmenian.Net-ի լրագրողներին: Սակայն ադրբեջանցի լրագրողները հասկանում էին, որ կատարվածն էլ բավական էր, որպեսզի ցուցահանդեսի մասնակից 50 երկրի ներկայացուցիչները հասկանային՝ Ադրբեջանը հեռու է քաղաքակիրթ պետություն կոչվելուց, եւ փորձում էին բղավելով հանգստացնել գործընկերոջը՝ առավել չխայտառակվելու համար: Փաստը, որ ադրբեջանցի լրագրողը հարձակվել է հայ լրագրողների վրա՝ նյարդայնացրեց ոչ միայն իրանցի կազմակերպիչներին, ովքեր իրենց խոսքերով փորձում էին հավասարակշռություն պահպանել, այլեւ օտարերկրյա պատվիրակությունների անդամներին, որ բացահայտ դատապարտում էին ադրբեջանցիների պահվածքն ու նրանց անվանում բարբարոս:

Իրանական կողմը յուրահանչյուր երկրի տաղավարը պատրաստելիս փորձել ստենդ էր պատրաստել, որը պետք է համառոտ տեղեկություն տար այցելուին տվյալ երկրի մասին: Իրանցի կազմակերպիչները որպես Հայաստանի ազգային պետական խորհրդանիշ ընտրել էին «Տատի ու պապի» լուսանկարը, ինչն ուղղակի կատաղեցրեց ադրբեջանցիներին: Իրանական կողմին չէր հաջողվում բացատրել ադրբեջանցիներին, որ լուսանկարի տեղադրման հետ հայկական կողմը որեւէ առնչություն չունի: Սակայն իրանական կողմը տեղի տվեց ադրբեջանական պատվիրակության սադրանքին եւ հայկական տաղավարի պատից հանեց սեփական ձեռքով ամրացրած լուսանկարը՝ հավելելով, որ չեն ցանկանում հակամարտության գոտում գտնվող որեւէ հուշարձան ցուցադրել տաղավարում: Դրան ի պատասխան, հայկական կողմը անգլերենով եւ պարսկերենով հայտարարություն տարածեց, բազմացրեց «Տատի ու պապի» լուսանկարը եւ մեծ աղմուկ բարձրացնելով բոյկոտեց ու հրաժարվեց մասնակցել ցուցահանդեսին: Թեպետ իրանական կողմը մինչեւ վերջին պահը համոզում էր հայ լրագրողներին վերադառնալ, սակայն վերադարձի միակ պայմանը «Տատի ու պապի» լուսանկարի տեղադրումն էր տաղավարի պատին:

«Ազգ» օրաթերթի լրագրող Հասմիկ Հարությունյանը եւ PanArmenian.Net-ի լրագրող Եկատերինա Պողոսյանը:

Այն, ինչ կատարվեց Թեհրանում, փոքրիկ տեղեկատվական ճակատամարտ էր, եւ հայկական պատվիրակությունը, որ պայքարում էր ադրբեջանական եւ թուրքական ավելի քան 15-հոգանոց պատվիրակության դեմ, կարիք էր զգում հայաստանյան լրատվամիջոցների աջակցության: Թեպետ հայ լրագրողները կարողացան մեծ աղմուկ բարձրացնել եւ իրանական հեռուստաընկերություններով եւ ռադիոկայաններով ներկայացնել կատարվածը, սակայն աղմուկն ավելի մեծ ու արդյունավետ կլիներ, եթե հայկական լրատվամիջոցներն էլ անդրադառնային կատարվածին:

Ի տարբերություն թուրքական եւ ադրբեջանական հեռուստաընկերությունների, որոնք անընդհատ անդրադառնում էին խնդրին, հայկական որեւէ հեռուստաընկերություն կատարվածին չանդրադարձավ: Սա տեղեկատվական պատերազմ էր, սակայն հայկական բազմաթիվ կայքէջեր եւ ռադիոկայաններ՝ մասնավորապես «Ազատությունը», Tert.am-ը, հողում էին անում ոչ թե Թեհրանից հայ լրագրողների գրած հոդվածներին, այլ ադրբեջանական «ԱՊԱ» գործակալությանը, որի լրագրողը հարձակվել եւ պոկել էր ՀՀ եւ ԼՂՀ քարտեզները:

Ակնհայտ է, թե ինչու ենք պարտվում տեղեկատվական պատերազմում: Հայկական լրատվամիջոցները միասնական չեն եւ առաջնորդվում են նեղ կոմերցիոն շահերով: Սակայն կան հարցեր, խնդիրներ, որոնց վերաբերյալ մոտեցումը պետք է լինի միանման: Ադրբեջանական լրատվամիջոցները համագործակցությամբ են հասնում հաղթանակի, մինչդեռ հայկական կայքերը սկզբնական շրջանում հրաժարվում էին «Ազգ» օրաթերթի կամ PanArmenian.Net-ի հոդվածները արտատպելուց՝ նախընտրելով ադրբեջանականը:

Տեղեկատվական պատերազմում պարտվում ենք, որովհետեւ չունենք անհրաժեշտ գրականություն: Վերոնշյալ ցուցահանդեսի նախապատրաստական աշխատանքների ժամանակ «Ազգ» օրաթերթը դիմեց բազմաթիվ գեղատեսչություններ, որոնց պարտականությունն էր Հայաստանի մասին ճանաչողական գրքեր հրատարակել, սակայն նրանք պատասխանում էին, որ գումարը չէր հերիքել գիրք տպելու համար, տպածն էլ, մեղմ ասած, աղբ էր եւ գովազդում էր տվյալ նախարարին ու նրա աշխատանքը: Միակ նախարարությունը որ օգնեց հայկական պատվիրակությանը, մշակույթի նախարարությունն էր, որ տրամադրեց հայերեն եւ անգլերեն գրքեր Հայաստանի մասին:

Եթե անընդհատ շեշտում ենք, որ մահմեդական աշխարհը շատ կարեւոր է Հայաստանի համար, հարկավոր է միջոցներ ձեռնարկել պարսկերենով կամ արաբերենով գրքեր հրատարակելու համար: Ի տարբերություն Հայաստանի՝ Ադրբեջանն արդեն սկսել է պարսկերենով գրքեր հրատարակել Ղարաբաղի մասին: Թեհրանում կայացած ցուցահանդեսը հերթական հնարավորությունն էր սխալները տեսնելու եւ հետագայում դրանք ուղղելու համար: Միայն միասնական գործունեությամբ հայկական կողմն էլ տեղեկատվական պատերազմում հաղթանակ կտանի, իսկ քանի դեռ այդ մտածելակերպը մեզանում բացակայում է, տեղեկատվական պատերազմում Ադրբեջանն է հաղթող ճանաչվելու:

ՀԱՄՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Թեհրան-Երեւան

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑՈՎ

ԱԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանի գլխավորած պատվիրակությունը կմեկնի Լեհաստան

Լեհաստանի Հանրապետության Ազգային անվտանգության բյուրոյի ղեկավար Ստանիսլավ Կոզիեյի հրավերով ՀՀ Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Արթուր Բաղդասարյանի գլխավորած պատվիրակությունը նոյեմբերի 2-4-ը պաշտոնական այցով կմեկնի Լեհաստան:

Այցի ընթացքում Արթուր Բաղդասարյանին կընդունի Լեհաստանի Հանրապետության նախագահ Բրոնիսլավ Կոմորովսկին:

Լեհաստանի Ազգային անվտանգության բյուրոյում բանակցություններից հետո նախատեսվում է Հայաստանի ազգային անվտանգության խորհրդի եւ Լեհաստանի Ազգային անվտանգության բյուրոյի միջեւ անվտանգության ոլորտում համագործակցության հուշագրի ստորագրում:

Այցի ընթացքում նախատեսվում են հանդիպումներ Լեհաստանի ներքին գործերի նախարար Ադամ Ռադացկու, պաշտպանության նախարար Բոգդան Կլիխի, Սենատի մարշալ Մարեկ Ժուլկովսկու, Լեհաստանի կառավարող «Քաղաքացիական պլատֆորմ» կուսակցության՝ Սեյմի եւ Սենատի խմբակցությունների ղեկավարներ Մալգորժատա Կիդավա-Բլոնսկայայի, Մարեկ Ռոցկու, ինչպես նաեւ՝ կուսակցության հիմնադիր անդամ, լեհ-հայկական բարեկամության պատգամավորական խմբի ղեկավար Լուկաշ Աբգարովիչի եւ բարձրաստիճան այլ պաշտոնյաների հետ:

Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարի մամուլի գրասենյակ

ԴԵՐԵՆԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Մեծ կորուստ կրեց հայոց պատմական գիտությունը. Իր մահկանացուն կնքեց լայնախոհ մտավորական, հայրենիքին նվիրյալ պատմաբան Դերենիկ Արմենակի Մուրադյանը: Դ. Մուրադյանը ծնվել է 1925 թ. Երեւանում՝ տոհմիկ մտավորականի գերդաստանում: Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետն ավարտելուց հետո՝ 60 տարի անընդմեջ պաշտոնավարել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտում: Դ. Մուրադյանի գրչին են պատկանում հայոց պատմության նոր շրջանի հիմնահարցերին նվիրված բազմաթիվ ուսումնասիրություններ: Նա լայն ճանաչում ուներ որպես փորձված, պատմագիտական մեծ կարողությունների տեր հմուտ մասնագետ, հայոց պատմության հանգուցային հարցերի լավագույն գիտակ, հարազատ ժողովրդի սակավ հայտնի բազում իրողություններ երբեմն արգելանքի տակ դրված ստուգախոս վավերագրերով ներկայացնող: Նա իր աշխատանքային երկարատեւ գործունեության ընթացքում մշտապես եղել է իր գործընկերների, մասնավորապես երիտասարդ մասնագետների գիտական խորհրդատու:

Կյանքից հեռացավ հարազատ ժողովրդի շահերով, նրա պատմական ճակատագրով ապրող իսկական քաղաքացին: Նա կյանքից հեռացավ հարազատ երկրի նոր նվաճումները տեսնելու, վայելելու կարոտով՝ գործակիցներին պատգամելով նվիրվել գործին, պահպանել հարազատ ժողովրդի կայծքարե ոգին:

Դ. Մուրադյանին ճանաչողները կորցրին ազնիվ, մեծ հոգու տեր, մարդկային բարձր բարեմասնություններով օժտված, ամբողջ կյանքում նվիրումի, ազնվության, անկեղծության սկզբունքներով առաջնորդվող մարդուն: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը կորցրեց իր խոհեմ, արդարամիտ գործընկերոջը:

Դ. Մուրադյանի հիշատակը վառ կմնա նրան ճանաչողների սրտերում:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Երեւանի հ. 155 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ն աշակերտական գույք ձեռք բերելու համար «Ե 155 ՀԴ-ԳՀԱՊՁԲ-10/1» ծածկագրով կազմակերպում է գնանշման հարցում:
Հրավերը ստանալու համար անհրաժեշտ է 650 ՀՀ դրամ փոխանցել 155 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի ՀԱՅԷԿՈՆՈՄ բանկի Շահումյանի մ/ճ 163028129522 եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել 155 հիմնական դպրոց ՊՈԱԿ հեռեւյալ հասցեով՝ Երեւան, Բաբինջաղյան 2-րդ նրբանցք, հեռ. 34-09-66 Լ. Ունջուղուլյանին:
Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրվա ժամը 14-ը:

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի դատախազների սպասարկման եւ արարողակարգի վարչության առաջատար մասնագետի թափուր պաշտոնի զբաղեցման համար անցկացվող բաց մրցույթի
/Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմ/

ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիր.

Դատախազների, աշխատակազմի ղեկավարի եւ վարչության պետի հանձնարարությամբ անհրաժեշտ նյութեր եւ տեղեկություններ նախապատրաստելը, նախապատրաստվող փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքներին մասնակցելը, ինչպես նաեւ օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված իր լիազորություններից բխող այլ գործառույթներ իրականացնելը եւ այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ) կրելը:

ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներ եւ աշխատանքային ունակությունների տիրապետման վերաբերյալ ներկայացվող պահանջները.

ա) բարձրագույն իրավաբանական կամ այլ մասնագիտական բարձրագույն կրթություն, բ) դատախազական (պետական) ծառայության պաշտոններում 2 տարվա սաժ կամ դատախազական ծառայության առնվազն 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան կամ 3 տարվա մասնագիտական աշխատանքային սաժ կամ վերջին 3 տարվա ընթացքում հաղթական կամ հայեցողական կամ հաղթաթղթական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային սաժ, գ) իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, դ) անհրաժեշտ գիտելիքներ եւ տեղեկատվություն իր տպասարկման բնագավառի մասին, ե) համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, գրական հայերենի պաշտամ իմացություն, առնվազն մեկ օտար լեզվի տիրապետում:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է «15» նոյեմբերի 2010թ. :

Մրցույթն անցկացվելու է 2010թ. դեկտեմբերի 1-ին ժամը «1100»-ին ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5/ :

Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացվում են ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5, հեռախոս 511-627/ :

01.11.2010թ.

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 1.11.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: